

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
նչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՔԱԴԵՎՈՍ ԱՎԴԱԼԲԵԳՅԱՆ

ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԹՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ

112

891.99.092 ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

ա - 78

928

186
31
196

397.99.092 Նախնական
Ա-78

-6 NOV 2011

ՔԱԴԵՎՈՍ ԱՎԴԱԼԲԵԳՅԱՆ

ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

ՊԵՏՄԵԿԱՆ — ԳՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԹՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԿՐՈՐԳ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Յ Ե Ր Ե Վ Ա Ն

1928



20 FEB 2013

70.153

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅՊՈԼԻԳՐԱՅԻ 1 ՏՊԱՐԱԿ
 ՊԱՏՎԵՐ 1610
 ԳՐԱԴ. 535 Բ. ՏԻՐԱԺ 2200

ՀԵՏԱԿԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ
 Гос. Библиотека
 ՀՅՍՏ-ԱՐՄ.ՍՍՐ
 И. А. Мясникова
 И. УСАՆԻՉՅԱՆԻ ՈՒՎԱԿ


24191-59

ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ
 ԾՆՆԴԻՅԱՆ ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱԿԻ
 (1829—1929)

Ս. Ռ. ԹԻՎ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ
 ԿԵՆՏՐՈՆ

ԸՆ. ԵՐԻՄ



ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

1829—1866

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Ցեքս
աջաբաններ	7
I. «Յերկրագործության» արժեքը	13
II. Ի՞նչ է կապիտալիզմը	17
III. Շահագործող դասակարգի իդեոլոգները	20
IV. Կոիվ կապիտալիզմի դեմ	26
V. Յերկրագործության, հողի համայնացում, ին- դիվիդուալիզմ	33
VI. Յերկրագործության ջատագովումն ու հողի համրայնացման պահանջներն անցյալում	40
VII. Գառակա՞րգ քե՞տ ազգու՞թյուն	47
VIII. Մատերիալիստական կացիանալիզմ	52
IX. Վարձկան մշակութային Սցիլլան ու վաճառակա- նության հարիբդան	57
X. Մաֆիան ու միևնույն ժրագրեր	64
XI. Զրուծված հանգույց	73
XII. Վաճառականությունը յերկրագործության ա- դախին	78
XIII. Ազգային արդյունաբերություն	86
XIV. Գյուղացիության փողի մտաակարար	93
XV. Նալբանդյանը մերկանտիլիստ	98
XVI. Հայ մերկանտիլիզմը, գյուղացիության իդեո- լոգիա	106
Իրջարան	113



ԱՌԱՋԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱԲԱՆԸ

«Փոքր է լոկ և միայն ստանալը և սեպհա-
կանելը գանազան զիտութիւնը և սեղեկու-
թիւնը, վոր հայտնագործել էյին ուրիշները՝
Հարկավոր է այդ ստանալուց և սեպհականե-
լուց նույնիսկ մարդու մեջ կատարվի մի հե-
ղափոխութիւն—վերածնելութիւն նորան ան-
հրաժեշտ հարկավոր է սեպհական գործունեյու-
թիւն, ընդունող, զնահատող և իշխող այդ
զիտութիւններէ վերա, հարկավոր է մտքի
արարչական, ստեղծագործական զորութիւն.
հարկավոր է, վոր այդ սեղեկութիւնը դրվի ին-
Վոյ վորպէս սերմեր ավազի վերա, այլ շարժու-
ղութիւն պատճառեին հողի մեջ և պտուղ տա-
լին: Այս ստեղծագործական զորութիւնը
մտքի՝ և նորա զլեռավոր զորութիւնը»:

Կ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Դեռ ևս 1910 թվականի սկզբին նորատակ ունենալով
ընթերցողներին ծանոթացնելու այն պաղտաբարները
հետ, վոր պարունակում է Միքայել Նալբանդյանի
«Յերկրագործութիւնը վորպէս ուղիղ ճանապարհ»
յերկը, մտադրվել էյինք այս փոքրիկ աշխատու-
թյան մեջ ամփոփված մտքերը զրի առնել, բայց
մի քանի կողմնակի հանգամանքներ ստիպեցին կարճ
ժամանակով հետաձգելու այս ձեռնարկութիւնը:

Հետագայում, 1911 թվականին, Նալբանդյանի մա-
սին մեկ յերկու աշխատութիւնների հրատարակվելն ի-

մանալով՝ յետ կանգնեցինք առաջադրած նպատակից՝ խորհելով, վոր հայ հրապարակախոսի յերկերն ստանձնապես ուսումնասիրող յուրաքանչյուր գիտակ անձ ամենայն հավանականությամբ յերևան կհանն ուշադրության արժանի գլխավոր փաստերը և կհանդէ միակ հրնարավոր յեզրակացություններին: Ուրեմն ավելորդ և ու վնասակար շտալություն, — մատծում և յինք, — հայ զբաղման նեղ հրապարակը դուրս բերել մի նոր, նույնպիսի մտքեր ամփոփող դրվածք:

Սակայն լույս տեսած նոր ուսումնասիրություններին ծանոթանալուց հետո տեսնելով, վոր մեր լավատես ու ալլահափան յենթագրությունները չեն իրականացած, և նկատելով, վոր Նալբանդյանի մասին տարբեր բանավեճերը արտահայտված թյուր կարծիքների վիժակը հորդանալու վրա յե, այլ և կամենալով մերովստանն հարգել հայ Գրականության նվիրական հիշատակը նրա գլխավոր յերկի հրատարակության հիմնամյակի (1862-1912) առթիվ, — վստահացանք ընթերցողների առաջ գնելու մեր այս թոուցիկ ուսումնասիրությունը:

Այս վերլուծական ահնարիկ մեջ չեն շոշափված Նալբանդյանի յերկի փոխափայտական ու անտեսագիտական մի քանի կարծիքներն, սրինակ, կյանքի, փոխափայտության առարկայի, փողի ու սրա չըջանաության, թանգության ու այլ առարկաների մասին հայտնած մտքերը, վորովհետև մեր նպատակն և յեղել պարզել, թե ինչ դատակարարային վողի յե իշխում նրա հայացքների մեջ. ուստի այս նպատակին համեմու համար նկատի յենք ունեցել վոչ թե «Յերկրազորության» մեջ ամփոփված ամեն մի փոքրիկ մանրամասնություն,

այլ հեղինակի աշխարհայացքի հիմնական մասն, այն և՛ անտեսության ձեռքերի մասին հայտնած կարծիքները:

Ճշմարտասիրությունը թելադրում և ասել, վոր աշխատությանս մեջ Նալբանդյանի մասին հայտնած մտքերից մի քանիսն ավելի սոսաջ ել արտահայտված են յեղել հայ մամուլի ու դրականության մեջ: (Հմմտ. 1. «Միքայել Նալբանդյան», հոգված Ալ. Մարտունու, «Հորիզոն» լրագիր, Թիֆլիս, 1910 թ., №№ 246 ու 247 և 2. «Միքայել Նալբանդյանի անտեսական թերթիան» Յեր. Պալյանի, Բաղու, 1911 թ.): Սակայն և այնպես մեր այս դրվածքը նախորդ աշխատությունների սոսկ կրկնությունը չէ: Նալբանդյանին վերաբերյալ դրականությանը ծանոթ ընթերցողը հեշտությամբ կնկատե այն գաղափարները, վարսեֆ առաջին անգամ այս վերլուծության մեջ եմ յերեվան գալիս: Ակնարկս վերաբերում է հատկապես գրված ֆիւ XI—XVI գլուխներին:

Բացի այս մենք չենք բավականացել ուշադրության արժանի այս կամ այն կետի վրա լիկ մատնանիչ լինելով, չենք հարկադրել ընթերցողին հավատալու մեր «աղնիվ խոսքին», այլ աշխատել ենք նրան համոզել ու առաջադրած թեղիաներն ապացուցանել՝ առաջնորդ ընդունելով մեծ պատմարանի—Թոմաս Բոկլի այն խոսքերը, թե «բոլորովին այլ բան և վորևէ ընդարձակ, ընդհանուր ճշմարտություն յուրացնելը և այլ բան՝ այս ճշմարտությունը յուր ճյուղավորություններով հեռարտելն ու ամեն ընթերցողի համար համոզիչ պայուցներով հաստատելը»:

Թ. Ա.

1912 թ. ոգոստոսի 25-ին,

Մեծ Ղարաբլիտա:

ՆԵՐԿԱ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱԲԱՆԸ

Ինչպես ժամանակակից մամուլից էլ հայտնի չէ, մեր այս աշխատությունը 1913 թվականի գործանք ցարական գրաքննության կարգադրությամբ փաստիկանության կողմից գրավիել է հենց տպարանում (վաղարչապատ) գեւ եւ շտեարած վիճակում: Ստիպյն գրքուչիխ XI—XIV ու XV—XVI գլուխները հնարավոր չեղավ նույն ու հաջորդ տարում, իբրև յերկու տասնձին հոգւած, վարչ լրացումներով հրատարակել մամուլի մեջ նորայր Պողիկյան կեղծանունով («Մերկանախիկովը հայոց մեջ»—«Հորիզոն» լրագիր, Թիֆլիս, 1913 թ., №№ 268, 269 ու «Հանգույցի լուծումը—Միքայել Նալրանդյանի աշխարհայացքի բնորոշման խոյրի շուրջը»—նույն լրագիր, 1914 թ. №№ 6, 10, 15, 21): Գրականպատմական վերլուծությանս այն հատվածները, վորոնք վերաբերում են Արսեն Թոխմախյանին, հետագայում զարգացնելով՝ նորհայութիւրի հետ գարձրինք առանձին աշխատություն, վոր նախ յայտ տեսավ նույն պարբերականում («Հորիզոն», 1914. №№ 66, 80, 95), իսկ 12 տարի անց 1926 թվականին տպագրվեց իբրև ատանձին գրքուչի «Արսեն Թոխմախյան» վերնագրով, «Հերմես» հրատարակչության հրատարակչությամբ:

Այժմ, 15 տարի հետո, աշխատությանս վերահրատարակման գրգապատճառը Միքայել Նալրանդյանի ծննդյան հարյուրամյակն է, վոր լրանում է գայ տարի

(1829—1929): Մեր կույտուրկրթական հիմնարկներն ու գրական կազմակերպությունները պետք է տոնեն եւ անշուշտ կտոնեն հայ մեծագույն հեղինակներից ու անգրանիկ հեղափոխականներից մեկի հիշատակն՝ ի միջի ալլոց նաև յայտ ընծայելով նրա յերկերից ու նրան վերաբերող գրականություն: Նալրանդյանի շարատանջ ճակատին բարեկից գրական պատկի մեջ զնելու համար յայր կողմից ահա այս աննշան փոստիկն առաջարկել իրավունք է համարում ստղերիս գրողը, վոր հալածվել է նրա հալածական հիշատակն «ի խորոց սրտի» մեծարած լինելու պատճառով:

Յարական գրաքննության վորակման հետևանքով քաղաքականգրական վավերագիր գարձած այս աշխատությունը հրատարակում ենք անփոփոխ՝ չհաշված լեզվակաւն մի քանի մանր ուղղումներ, վորոնց թվարկումն ավերորդ ենք կարծում:

Նալրանդյանի նկարը, վոր կցված է գրքուչիխ, հանված է նկարիչ Յե. Չերեպախինի քաշած յուղաներկ պատկերից, վորը պահվում է Հայաստանի Պետական Թանգարանի գրական բաժնում:

Վերջում պարտք ենք համարում շնորհակալություն հայտնել յեղորոք—Մշատուր Ավլալուկյանին ու բնկերոջս—Վարդան Փոթեյանին, վորոնցից առաջին ուսուցչական սուղ միջոցներով ու յերկրորդի ջանագիր հսկողությամբ կատարվել է գրքուչիխ 1913 թվականի հրատարակչությունը:

1928 թ. հունվարի 9-ին,

Յերեվան:

Մ Ի Ք Ա Յ Ե Լ Ն Ա Լ Բ Ա Ն Դ Յ Ա Ն

Պատմական—գրական վերլուծութիւն

Միքայել Նալբանդյանը սուսահայ գրականութեան առաջին շրջանի ուրիշ հեղինակներէ նման ծառայել և գրականութեան մի քանի ճյուղերի: Գրել և լատնատեղծութիւններ, որինակ՝ «Ազատն Աստված», «Իտալացի աղջկա յերգը», «Մանկութեան որեր», «Յերազ», «Վայր բնկնող աստղեր», «Հիմի յել խոսենք» և այլն, ունի վեպեր, որինակ՝ «Մինին խոսք, մյուսին հարս» ու «Մեռելահարցուկ», լույս և բնծայել գիտական աշխատութիւն—Ղազար Փարսեցու՝ Վահան Մամիկոնյանին ուղղած թղթի աշխարհարար հրատարակութիւնը բազմաթիւ ծառայութիւններով և վերջապէս արել և ստար լեզուներից թարգմանութիւններ, վորոնցից ամենահայտնին և եժեն Սյուրի «Թափառական հրեան»:

Զնայելով, վոր հիշյալ աշխատութիւններն արժեքավոր են գրականութեան պատմաւորի համար, վորովհետեւ պատկանում են արեւելեան աշխարհարատով զբոված առաջին յերկերի թվին և նույն ճյուղերում կատարված անդրանիկ աշխատութիւններից են, այնուամենայնիւ նրանք չեն կարող Նալբանդյանի համար նշանավոր հեղինակի անուն վաստակել: Հայ մտքի գար-

գազման պատմութեան մեջ Միքայել Նալբանդյանը մեծ տեղ է գրավում Վոչ Թե բանաստեղծական, վիպական, դիտական ու թարգմանական աշխատութիւններով, այլ հրապարակախոսական գրվածքներով:

Սակայն այս վերջին յերկերն սկզբից և յեթ քարացած, անփոփոխ աշխարհայացք չեն պարունակում. ժամանակի ընթացքում Միքայել Նալբանդյանի դավաճանած գաղափարները փոփոխութեան յենթարկվելով գարգացման գագաթնակետին եւ հասնում հատկապէս «Յերկրագործութիւնը վարպետ ուղիղ փանապարի» գրվածքի մեջ, վորը հայ յերկերի հեղինակի հրապարակախոսական յերկերի պակն և կազմում:—

Հիշյալ գրվածքը, վոր ատջին անգամ հրատարակվել է Փարիզում 1862 թվականին և վորի վրա հեղինակի անվան փոխարեն գրված է յեղել Սիմեոն Մանիկյան կեղծանունը, հայ հրապարակախոսի զխաւոր աշխատութեանը լինելով հանդերձ նաև ընդհանրապէս հայոց գրականութեան նշանավոր հեղինակութեանը մերից մեկն է հետեւյալ պատճառով: Հայոց գրականութեանը, վոր հարուստ և յեղել կրօնական ու դավանաբանական հարցերին նվիրված յերկերով, պատմագրական աշխատութիւններով, վոր այժմ էլ հարուստ և վեպերով, թատերագրութիւններով, բանաստեղծութեաններով և այլն, — շատիցանց ազգատ և անտեսական խնդիրների քննութեամբ գրողով հեղինակութեաններով: Այս և պատճառը, վոր մինչդեռ ոտար գրականութեաններին մեջ Նալբանդյանի յերկի նման յերկը բոլորովին յերկրորդական, փոքր տեղ կգրավեր, մեր տնտեսական հարցերին նվիրված գրքերով ազգատ գը-

րականութեան մեջ «Յերկրագործութեանը» հանդիսանում է ատջնակարգ ու կարեւոր յերկ, վորովհետեւ պատկանում է անտեսական խնդիրներով գրողով սուկավաթիվ գրքերի թվին: Հասկանալի յե, վոր այսպիսի մի գրվածք անուշաղբութեան մատենի յե կարող Վոչ մի բանիմաց ուսումնասիր:

Նալբանդյանի այս նշանավոր յերկի—«Յերկրագործութեանը» ուսումնասիրութիւնը վնական նշանակութեան ունի Վոչ միայն հայանի հրապարակախոսի գրական գործունեութեան գասակարգչին գույնը վոր յեղել և հայ անտեսական աշխարհայացքի գարզայման մի նշանավոր եջը բուարանկրու, այլ և ռուսական գրականութեան առաջին շրջանի (50—70 թ.թ.) սոցիալովիական բնույթը յերեւան հանելու համար:

Մի քանի տարի յե, վոր հրապարակի վրա գրված է վերջին խնդիրը, այն և, թե ինչ դասակարգի իրենույզիա յե բովանդակում այն գրականութեանը, վոր իրբի ժատանութեան թողել են ինչաոտար Արովյանը, Ստեփաննոս Նաղարյանը, Միքայել Նալբանդյանը, Ռափայել Պատկանյանը, Սմբատ Ծահաղիւզյանը և այլն: Այս հարցի գրվելու հետ միասին հայտարարված է նաև նրա միակողմանի պատասխանն, ըստ վորի այս գրականութեանը միայն մի դասակարգի—բարձրագիայի իրենույզիա յե պարունակում: Սույն կարծիքի հակառակ արտահայտվել և նաև այն միտքը, թե հիշյալ հեղինակները գաղափարակից անձնավորութեանները չեն, այլ կռվում են դանաղան գրողներին տակ, հանուն տարբեր իրեաների. ուրիշ խոսքով՝ հայ վերածնութեան գրականութեանը միայն մի դասակարգի միայնակող իրեն-

լուգիա չե՝ այս ուպագիցիոն գրականութեան իմքը յուր մեջ ունի աչակողով ու ձախակողով՝ այս գրականութեանը յուր տարբեր ներկայացուցիչների բերանով արտահայտում է վոչմիայն մանուկ բուրժուազիայի, այլ նաև հասարակական ուրիշ խմբերի, սրանց միջից գլխավորապես գյուղացիութեան իդեալները։*)

Այս վեճի՝ այս կամ այն պատասխանին հանդերձ նշանակութեան ունի վոչ միայն հայոց զբաղանութեան պատմութեան, այլ և այն ժամանակվա հայ հասարակութեան տնտեսական-տնտեսական դրութեան պատկերի համար։ Յե՛վ այս շատ պարզ է։ Վերստին հետևելով իրենց անտեսական կառուցվածքի արտացոլումն և մարդկանց գիտակցութեան մեջ, և իրենց լրջաբան վերաբերանքին համապատասխանում է անտեսական վերջ կառուցվածք, ապա հասկանալի չէ, վոր յերբ իրենց լրջաբան մեջ նոր կերպարանքով և հայտնվում, մենք այլ ևս չենք կարող հին, նախկին անտեսական կառուցվածքը յերևակայել։ «Վերնաշենքի»—մարդկանց գիտակցութեան մասին մեր կարծիքը փոխելուց հետո ստիպված ենք փոխելու նաև մեր հայոցոյր «հիմքի»—հասարակական կեցույթի մասին։

Միքայել Նալբանդյանի յերկրագործութեանը վերաբերող ուղիղ ճանապարհ» անունով գրվածքն, ի միջի այլ հետևանքների, կարող է նաև ամենահաջող փոխձանի հասցնել վերոհիշյալ վեճը, վորովհետև նրա մեջ ամփոփված իրենց իրենց հանդես և գալիս վոչ թե զեղարվեստական հանդերձի տակ, վոր սոցիոլոգիական տե-

*) Տեսք «Սուրհանդակ» լրագիր, Թիֆլիս, 1911 թ. № 286 ու 287։

տակետից ավելի զգալիորմբունելի է, այլ տրամաբանական պատճառաբանութեաններով, վորոնք ավելի մեկին ու մատչելի չեն հետախույզ մտքին։

II

«Յերկրագործութեան» առաջին եջերը նվիրված են կապիտալիզմին, իսկ մնացածը՝ հայ հասարակութեան անտեսական խնդիրներին։ Նալբանդյանի վերաբերմունքը դեպի կապիտալիզմն ու հայ հասարակական խմբերը միանգամայն ակնհայտ կացուցանելու համար հարկավոր է նախապես մի քանի խոսք ասել կապիտալիզմի ու նրա իրենց իրենց մասին։

Ի՞նչ է կապիտալիզմը։

Յեթե ասենք, թե կապիտալիզմի ամենատեղական հատկանիշը կազմում է այն, վոր մի դասակարգ շահագործում է մի ուրիշ դասակարգի, վոր հասարակական մի խումբ ապրում է մի ուրիշ խմբի հավելյալ աշխատանքով, ապա մեծ սխալ դործած կլինենք, վորովհետև անգործ վախճալների ու անգործ զրկվածների հարցը կապիտալիստական անտեսութեանից առաջ էլ դուրս էր լինում ունենք։ Այսպես որինակ՝ անտիկ անտեսութեան ժամանակ տերերն ապրում էին ստրուկների աշխատանքով, իսկ Փետրարական հասարակութեան մեջ աղքատականներին կերակրում էին ճորտերը։ «Հավելյալ աշխատանքը կապիտալի հնարածը չէ»,—և այս կազմից հիշյալ յերեք անտեսութեանները տարբերութեան չունեն։

Կապիտալիզմի ետևան հատկանիշն, առանց վորի այս անտեսութեանը դուրս էր գալիս չէ կարող այն է, վոր անմիջական արտադրության ազատ



անձն է : Այժմ յայն անմիջական արտադրողը--բանվորն ազատ իրավունք ունի յուր բանվորական ույժը վաճառելու , ուժ վոր կամենում է , մինչդեռ ճորտն ու սարսուկին իրավասուս ազատ չեյին . նրանց բանվորական ույժի սեփականատերն ուրիշ անձնավորություն էր :

Բայց յեթև բանվորն ունենար արտադրության միջոցներ , այսինքն աշխատանքի միջոցներ ու աշխատանքի նյութ , այն ժամանակ բանվորական ույժը չէր վաճառել ուրիշին , այլ կարողարէր յուր համար և կհարստացներ իրեն : Ուրեմն վարպետի բանվորն ստիպված լինի բանվորական ույժը վաճառելու , ապա բովական չե , վոր միայն իրավական ազատություն ունենա : Նա պետք է մի ուրիշ , տարրինակ «ազատություն» ևլ ունենա . նա նկար է «ազատ» լինի արտադրության միջոցներէ , զուրկ՝ այնպիսի սեփականությունից , վորը կարողանար նրա համար ծառայել իրրն աշխատանքի միջոց ու նյութ :

Ուրեմն կապիտալիստական հասարակություն այն հասարակությունն է , վորտեղ արտադրության միջոցները բաժանված են անմիջական արտադրողներից , իսկ անմիջական արտադրողներն իրավասուս ազատ բանվորներ են : Առանց ժամանակակից պրոլետարիատի չկա կապիտալիզմ , չկա բուրժուական սեփականություն :

Սակայն մարդիկ չեն ծնվում մոմանք արտադրության միջոցներով և վճարանք առանց արտադրության միջոցների . այլ խոսքով՝ հասարակության՝ սեփականատեր ու սեփականագուրդ բանակների բաժանվելը մարդկության պատմության մեջ մշտնջենական յերևութ չե , այլ պատմական հանդամանքների հե-

տեանք : Ուրեմն տարրինակ «ազատություն» ունեցող բանվոր պատակարդի գոյությունն ևլ պատմական վճարող պայմաններէ արդյունք է : Արդ վորո՞նք են այն պատմական պայմանները , վորոնց անհրաժեշտ հետևանքը լինում է ժամանակակից պրոլետարիատի գոյությունը :

Բանվոր բազմության առաջանալու պատմական պայմանը մանր գյուղացու հողագրկությունն ու մանր արհեստավորի տնտեսության անկումն է : Թե մանր գյուղացու և թե մանր արհեստավորի անտեսությունը չեն հիմնվում ուրիշի աշխատանքի շահագործման վրա . մանր գյուղացին ու մանր արհեստավորն ապրում են իրենց սեփական աշխատանքով : Պրոլետարիատի ծրննդյան , հետևարար և կոտորտալիզմի , այսինքն ուրիշի աշխատանքի շահագործման վրա հիմնված ժամանակակից տնտեսության անհրաժեշտ պայմանը մանր տնտեսության անկումն է , մանր արտադրողների՝ արտադրության միջոցներից զրկվելը :

«Քաղաքատնտեսությունը ,--գրում էր «կապիտալիզմ» հեղինակը ,--սկզբունքորեն շփոթում է մասնավոր սեփականության յերկու շատ տարբեր տեսակներ , վորոնցից մեկը հիմնվում է արտադրողի սեփական աշխատանքի վրա , իսկ մյուսն ուրիշի աշխատանքը շահատանելու վրա : Նա մոռանում է , վոր վերջինս (ուրիշի գործելու վրա : Նա մոռանում է , վոր վերջինս (ուրիշի աշխատանքի շահագործման վրա հիմնված սեփականությունը . Թ . Ա .) վոչ միայն առաջին (սեփական աշխատանքի վրա հիմնված սեփականություն . Թ . Ա .) ճիշտ

հակադեմոկրատներն և կազմում, այլ և դարձանում և նրա գերեզմանն վրա» :*)

Մանր—գյուղացիական ու արհեստավորական—արտադրութունն և խոշոր—յերկրագործական ու դործարանային—արդյունաբերությունը հասարակության մեջ միաժամանակ գերիշխող լինել չեն կարող : Կապիտալիստական հասարակութան մեջ մանր տնտեսութունը հազիվ է քարչ տալիս յուր թշվառ դոյութունն, որինակ՝ Անգլիայում, և ընդհակառակը, վորտեղ գերիշխող և մանր տնտեսութունն, այնտեղ կապիտալիզմ կամ բուրժուազիզմ դոյութուն չունի և կամ թե սաղմնային դրության մեջ է, որինակ՝ Պարսկաստանում : Արտադրության ու սեփականության այս յերկու տեսակները նման են կշեռքի յերկու թավերին. վորքան ծանրանում է մեկ թավն, այնքան բարձրանում է մյուսը :

Ասածներեցս պարզապես հետևում է, վոր մանր տնտեսությունները պաշտպանողը գիտակցաբար կամ թե անգիտակցորեն արգելի է լինում խոշոր արդյունաբերության, ուրեմն և բուրժուազիայի զարգացմանն. իսկ խոշոր արդյունաբերության ջատագովը ձգտում է քայքայելու ժողովրդի, այսինքն մանր արտաբողոքների տնտեսությունը, ուրեմն նպաստում է մանր գյուղացիության ու մանր արհեստավորության անկումը :

III

Բերենք մի քանի որինակներ, վորոնք հաստատելով վերևում ասածները՝ անձամեկույթ ներկայացնում են ժամանակակից շահագործող դասակարգի նվիրական ձգտումները, նրա իդեոլոգիայի ուղն ու ծուծը : «Սրտի

*) К. Маркс: Капитал, т. I, пер. В. Вазарова и И. Степанова, Москва, 1909 էր. 725.

հավելվածից է խոսում բերանը» : Տեսնենք, թե հետևյալ «հավելվածներն» ինչ են վկայում բուրժուազիայի «սրտի» մասին :

17-րդ դարի վերջում, 1696 թվին Ջոն Բեյլերսը գրում է .

«Յեթե մի մարդ ունենար հարյուր հազար ակր հող, նույնքան ֆունտ ստերլինգ փող, նույնքան գլուխ անասուն, այն ժամանակ ի՞նչ կլիներ այս հարուստ մարդն առանց բանվորների, յեթե վոչ՝ մի բանվոր : Յեվ վորովհետև բանվորները հարստացնում են մարդկանց, ուստի վորքան շատ բանվորներ լինեն, այնքան ել շատ հարուստներ կլինեն... Աղքատների աշխատանքը հարուստների համար հանքալայր է» :*)

Ջոն Բեյլերսից տաս տարի հետո, XV^{III} դարի սկզբում, 1706 թվին Բերնարդ դե Մանդևիլին ասում է .

«Այնտեղ, վորտեղ սեփականութունը բավականաչափ պաշտպանութուն է դնում, ավելի հեշտ կլինի ապրել առանց փողի, քան առանց աղքատների, վորովհետև վերջին դեպքում ո՞վ պետք է աշխատանք կատարեր... Բուրժուազիայի հարուստ ազգերի շահը պահանջում է, վոր աղքատների մեծամասնությունը յերբեք առանց գործի չմնա և միշտ ամբողջովին ծախսե այն բալորը, ինչ վոր ստանում է :... Ազատ, այսինքն յուր միջից ստրկությունը վերացրած ազգի համար ամենից անկասկածելի հարստությունն աշխատանքի աղքատների բազմության մեջ է ամփոփված : Հասարակությունը՝ յեր-

*) Քաղում ենք «Капитал»-ից, I, յերես 577 : Աւրողջ աշխատության մեջ քաղվածների ընդգծումները մերն են :

ջանիկ, իսկ ժողովուրդը նույն իսկ յուր թշվառ դրութեամբ գոհ կացուցանելու համար անհրաժեշտ է. վար հակայական մեծամասնութիւնը տգիտ ու աղքատ մնա»։*)

Յերբ XIII դարում անգլիացի շինականների հողերը բունի հափշտակելով նրանց բանվորներ ելին դարձնում, և վրձանք մատնանիչ ելին լինում հիշյալ յերեսյի վնասակար հետևանքների վրա, մի հեղինակ 1773-ին այսպես էր բացատրում արտադրողների հողատիրի լինելու սղուանները։

«Միայն և այն յեղբակացութիւնը, — դրում էր, — մի յերկիրն ամայացել է, վերստին հասնող գարնակութիւնն ալ ևս չի վառնում յուր աշխատանքն ազատ գաշտելում։ Յեթե մանր գյուղացիներն ուրիշներին համար աշխատող են դարձել և այսպիսով ավելի մեծաբանակ աշխատանք է գործունեութեան մեջ դրված. ապա այս հանգամանքն ազգի համար սգոտակար և ցանկալի յե միայն։ Արդյունք ավելի շատ է ստացվում»։**)

Արթուր Յունզը, վորին «Կապիտալի» հեղինակը «հավելյալ արժեքի ֆանտոսիկոս» է անվանում, 1774 թվին այսպես էր դատում մանր արտադրութեան մասին.

«Ի՞նչ սղուտ կոտանար ժամանակակից պետութիւնը մի ամբողջ գովառից, վորի հողը հին հոսով-

*) Նույնը, յեր. 577—578։

***) Նույնը, յեր. 688։ Այս հասովածի առթիվ ենդելսը հեղինակով միջանկյալ նկատում է. «Հասկանալի չէ, վոր փոխակերպված գյուղացիներն ազգի անդամների թվին չեն պատկանում»։

մեական յեղանակով մշակելին մանր, անկախ գյուղացիներ, այն էլ ամենալավ յեղանակով։ Ի՞նչ նպատակի կհասցնէր այս. յեթե վնչ այն նպատակին միայն. վար այստեղ կարտադրվեյին մարդիկ (կբազմանային. թ. Ա.), — մի բան, վար ինքն բստիւնէյան վնչ մի նշանակութիւն չունի»։*)

Անգլիացի քահանաներից մեկը՝ Townsend կարծում է, վոր այդքատութեանը Աստու և բնութեան ստեղծած յերեվութիւններից մեկն է ու անխուսափելի պայման քաղաքակրթութեան զարգացման։

«Ըստ յերեվութիւն բնութեան որենքն այնպես է, — դրում է այս քահանան 1786-ին, — վոր այդքանները վորոչ չափով անհետատես են, այնպես վոր հասարակութեան մեջ միշտ գտնվում են մարդիկ, վորոնք կատարում են ամենատարակական, ամենակեղտոտ ու ամենաստոր գործողութիւններ։ Այս հանգամանքի շնորհիվ մարդկային յերջանկութեան գումարը սատարիկ մեծանում է. ավելի նրբաւուն մարդիկ ազատվում են ծանրութիւններից և առանց արգելի կարող են նվիրվել իրենց ավելի բարձր կոչմանը։ . . . Այդքանների մասին հրատարակված որենքը ձգտում է խանգարելու ներդաշնակութեանն ու զեղեցկութեանը, համաչափութեանն ու կարգն այս սխտեմի, վոր սահմանել են յերկրի վրա Աստված ու բնութեանը»։**)

Տեսնապետ հեղինակները Գեոտյուա դե-Տրասիրն էր վիճակված հիշյալ մտածմունքներն ամփոփել մի կլասսիկ աֆորիզմի մեջ։

*) Նույնը, յեր. 193։

***) Նույնը, յեր. 610։

«Աղփատ ազգեր նրանք են, —նկատում է նա ստու-
նարատութեամբ, —վորտեղ ժողովուրդը բարձր վիճակ
ունի, իսկ հարուստ ազգեր՝ նրանք, վորտեղ ժողո-
վուրդը սովորաբար աղփատ է»։*)

Այս ընդարձակ հատվածները ցույց են տալիս նախ
այն, վոր բուրժուազիայի իդեոլոգիան ըմբռնում են.
թե այսպես կոչված «ազգային» հարատուքունը հետե-
վանք է ժողովրդի աղփատութեան, ուրիշ խոսքով՝ այն
հարատուքունն ու այս ազգատուքունը յերկվորյակ-
ներ են, և յերկրորդ այն, վոր կապիտալիստական սրն-
տեսութեան նույն ջատագովները մանր արտադրութեան
անկումն անհրաժեշտ պայման են համարում խոշոր.
այսինքն բանվորի շահագործման վրա հիմնված ար-
դյունաբերութեան գարգացման համար:

Բուրժուազիայի իդեոլոգի՝ դեպի մանր տնտեսու-
թյունն ունեցած վերաբերմունքը շատ պարզ յերևան է
գալիս մանավանդ այն ժամանակ, յերբ խոսք է լինում
գաղութների մասին: Սովորական իմաստով գաղութ են
կոչվում նորաշեն բնակավայրերը, վորոնց ազգաբնա-
կութունը գաղթել է մի ուրիշ տեղից. որինակ՝ ասում
ենք. Փարիզի հայ գաղութը, Նոր Զուղայի գաղութը և
այլն: Բայց տնտեսագիտական իմաստով գաղութ ան-
վանվում է յերկրի այն մասը, վորտեղ վոչ միայն ան-
մշակ հողերի առատութեան կա, այլ և հողը հասարա-
կութեան սեփականութեանն է կողմում, այնպես վոր
գաղութի յուրաքանչյուր անդամ, հին թե նորեկ, կա-
րող է նրանից յուր համար մշակելի բոժին ստանալ:

*) Նույնը, յեր. 611:

Բուրժուազիայի իդեոլոգը սրտի ցավով տեսնում է, վոր
գաղութներում յերկար ժամանակ չէ զարգանում կա-
պիտալիզմը, վորովհետև գաղթականներն ոտարի արն-
տեսութեան մեջ իրեն բանվոր չահագործվելու փոխա-
նակ՝ գերազատ են համարում չարչարվել սեփական
տնտեսութեան վրա: Գաղութի ազատ հողի Ֆոնդը հը-
նարավորութեան է տալիս ձեռք բերելու անկախ հողա-
բոժին ու վարելու սեփական տնտեսութեան: Բացակա-
յում է պրոլետարիատը, ուստի և չէ զարգանում կապի-
տալիզմը:

«Վորտեղ հողը շատ արժան է, —գանդատվում էր
Wakefield-ը 1835 թվին, — և բոլոր մարդիկ ազատ են,
վորտեղ ամեն մեկը կարող է յուր համար հողաբաժին
ստանալ ցանկութեան համեմատ, այնտեղ աշխատանքը
վոչ միայն շատ քանից է (յեթե հաշիւ տոնենք այն մա-
սը, վոր ստանում է բանվորը յուր արտադրած ար-
դյունքից), այլ և դժվար է ընդհանրապես համակցված
(комбинированный) աշխատանքի ձեռք բերել վորելի գը-
նով... Յեթե կապիտալը (ուզում է ստել արտադրու-
թեան միջոցները. Թ. Ա.) հավասար մասերով է բաշի-
ված հասարակութեան անդամների միջև, ապա վոչ վոք
չահագորդված չէ կապիտալ ավելի կուտակելու, քան
կարող է գործադրել սեփական ձեռքերով: Վորոշ չա-
փով այս յերեկվուրքն է նկատվում ամերիկյան նոր գա-
լութներում, վորտեղ հողային սեփականութեան սա-
տիկ սերն արգելի է լինում վարձու բանվոր դասակարգի
գոյութեան: ... Սան-Դոմինգոյի առաջին սպանացի
գաղթականները չունեյին Սպանիայից բերած և վոչ մի
բանվոր: Կապիտալն առանց բանվորների կոչնչանար

կամ կրճատվելով կհասնենք այնպիսի մահը շախիբի վորքան վոր կարող էր գործադրել յուրաքանչյուր անհատ բացառապես սեփական ձեռքերի սգնութեամբ: Իրապես հենց այս տեղի ունեցավ անգլիացիների հիմնած վերջին գաղութում. վորտեղ սերմերից, անասուններից ու գործիքներից կազմված մեծ կապիտալը վաչկազգավ վարձու բանվոր չգտնելու պատճառով, և վորտեղ վաղ մի գաղթական չունի այնպիսի կապիտալ, վոր յուր շահի երավ շատ ավելի մեծ լիներ. բան կարող էր նա գործադրել սեփական ձեռքերի ոգևորքամբ»:^{*})

Wakefield ի այս արտառնչներն այլ ևս կասկած չեն թողնում, վոր մահը արատաբար իշխած տեղում չկա պրոլետարիատ, ուստի և չկա կապիտալիզմ, չկա բուրժուական սեփականություն: Գաղութների անաջին շրջանի կյանքն անհերքելի կերպով յերեվան է հանում այն հակադրությունը. վոր գոյություն ունի մանր արտադրության կամ անձնական աշխատանքի վրա հիմնված անտեսություն և խոշոր արդյունաբերության կամ բանվորի շահագործման վրա հիմնված արևտեսություն միջեղ:

IV

Կապիտալիզմի ու բուրժուական իդեոլոգիայի էություն մտախն այս նախնական համատեղ տեղեկությունները աալուց հետո այժմ արդեն կարող ենք անցնել Նալբանդյանի աշխարհայացքին ու հեղափոխումը վորոչէլ, թե ինչ է գրված նրա գրքակի վրա. կապիտալիզմ, թե կապիտալիզմի վերացում, շահագործումն, թե սեփական աշխատանք:

^{*}) Նույնը, յեր. 727—728:

Առաջին հետաքրքրական տարբերությունը, վոր ունի Նալբանդյանը մեր հիշած բուրժուական հեղինակներից, այն է, վոր մինչդեռ սրանք ազգ ու բուրժուազիա գաղափարները նույնացնում են և հակադրում ժողովրդին, «Յերկրագործության» հեղինակն, ընդհակառակն, ազգ ասելով հասարակ ժողովուրդն է հասկանում և հակադրում է ազնվականությանն ու կարուսներին:

«Ազգ ասելով պիտի իմանալ հասարակ ժողովուրդը և վոչ նրա միջև, նորա քրտինքով ու նորա արյունով հասաջացած մի քանի մեծատունք»:^{**})

«Յերբ տերութունը պեսք ունի, յերբ պատերազմ ունի, ... վորից հասարակ ժողովրդի—ազգի համար չկա վոչ ջերմութուն և վոչ ցրտություն, տերութունը գտնում է դեպի ազգը...»^{***)}

«Յեզ անկարելի յե... հիմքը նորագել, քանի վոր ազգը, հասարակ ժողովուրդը կարոտ և սրական հացի»:^{***})

^{*}) «Միքայել Նալբանդյանի յերկերը», հասար. Բ. Բոստով Գոնի վրա, 1906, յեր. 312:

^{**}) Նույնը, յեր. 315:

^{***)} Նույնը, յեր. 348: Թե ինչնարդ գե-Մանդելի, Արթուր Յունգի ու ընկերություն և թե Նալբանդյանի հիշյալ հատվածներն ուշադրավ են ի միջի ալուց նաև այն կողմից, վոր ցույց են առլիս, թե «ազգ», «ազգություն», ուրեմն և «ազգային շահ» բառերը վորքան տարբեր սոցիոլոգիական բովանդակություն ունեն: Ֆրանսիայի գրող ինֆնակալի հետեվորքայալը, վոր ասում էր՝ «Որեմիք յե՛ս եմ»,—յուրաքանչյուր հասարակական խումբ անկեղծության րո-

Յուր դավանած «ազգի», այսինքն հասարակ ժողովրդի շահերի տեսակետից ե մոտեցնում Նալբանդյանը հասարակական հարցերի, ի միջի այլոց նաև կապիտալիզմի ֆենուսթյանը:

Պատմելով, թե ինչպես հարյուրավոր անգամ ինքը լսել է, վոր Անգլիան ու Ֆրանսիան հարուստ են, թե ինչպես շատերը դովում և բյուր յերանի յեն տալիս անգլիացիներին ու ֆրանսիացիներին, Նալբանդյանը բողոքում է նման կարծիքների դեմ:

պեմերին աղաղակում է. «Ազգը յե՛ս եմ»: Այս տեսակետից հետաքրքրական որինակներ կան նաև բանվորական, սոցիալիստական դրականության մեջ: Ահա մի նմուշ խաղաղի սոցիալիստների՝ 1897 թ. հրատարակած թուրքիկից. «Սեփականությունը, աշխատանքի գործիքները, հողը պետք է խլել ընչատերերի ու հարուստների ձեռքից և դարձնել ազգի, այսինքն բոլոր աշխատավորների սեփականություն»: Р. Пелъман.

История античного коммунизма и социализма. «Изд. Брокгауз-Ефрон, СПб, 1910, յեր. 671: Հիշատակության արժանի յե նաև հետևյալ հատվածը, վորը դուրս է յեկել Սեն—Սիմոնի դրչի տակից այն ժամանակ, յերբ նա արդյունաբերող դասակարգի ջերմ յերկրպագուն էր. «Իավանում եմ, վոր հարուստ արդյունաբերողները, վորոնք ամենորյա աշխատանքների ժամանակ հրամայում են բանվորներին, այսպիսով հանդես են գալիս իբրև ժողովրդի մեծավորներ, այն ժողովրդի, վորի անհրաժեշտ մասն են կազմում. սրանից հետևում է, վոր սրանիք են ուղղել, բնական ազգը, միակը, վորին քաղաքական իրավունքներ տալ թույլատրում են բարոյականությունը, արդարությունը»: В. Святловский. «Очерки по истории политической экономики». СПб., 1910, յեր. 844:

«Այն ժամանակ միայն ստուգապես կարող ենք ասել, թե Անգլիան հարուստ է, յեթե այն միլիոններ բաղկացնող անհասաների (ժողովրդի. թ. Ա.) մոտ տեսանենք նյութական կարողության նշմարանք»:^{*})

Այսպիսի նշմարանք չե նկատում հեղինակը, ուստի և յեղրակացնում է ի զարմանս յուր ընթերցողների.

«Անգլիական ազգը ամեն ազգից աղքատ է և ամեն ազգից ավելի վտանգի յենթակա»:^{**})

Ի՞նչն է անգլիական ու ֆրանսիական ազգի, հասարակ ժողովրդի թշվառության պատճառը:—կապիտալիզմը, —պատասխանում է հեղինակը, —վորի ժամանակ չքավոր մասսան յենթակա յե ամեն տեսակ պատահարների վնասակար ազդեցության:

«Ամերիկան պտտերազմ ունի յուր մեջ, չի կարող բամբակ տալ Անգլիային, նորա բամբակեղեն ապրանքի գործարանքը փակվում են, գործարանատերքը անանկանում և անգործ մնացած բյուրավոր գործավորքը սրահան հացի կարոտ և վերջին հուսահատության մեջ:... Մեր աչքի առջև են բյուրավոր անգործ գործավորք, վոր տանջվում են սովից և վերջին ճիգն են թափում պտտերազմելով մի ծայրացյալ աղքատության հետ:... Անգլիո մեջ վորևիցե մի ձեռագործի ընկնելու կամ ընթացելից զրկվելու հետ կապակից է բյուրավոր անհասաների թշվառությունը: Մի տեսակ ժապավեն, վոր առաջ գործածական էր, դուրս ընկավ սովորությունից և ժողովուրդը դադարեցավ զնելուց. սրանից ավելի

^{*}) Մ. Նալբանդյանի յերկերը, Բ. յեր. 313:

^{**}) Նույնը, յեր. 312:

ի՞նչ հասարակ բան կարող է լինել: Բայց յեկեք, նայենք այս հասարակ բանի հետևանքին: Հազարավոր խանութներ, հարյուրավոր գործարանք և բյուրավորք մնացին պարճյալ սնդորձ, անհաց, անտուն, անտեր: Պրանսիայի մեջ լիտն քաղաքում նույնպես փակվեցան մի քանի գործարանք, գործավորներին պատահեցավ գրեթե նույն ճակատագիրը, ինչ վար Լանգսնում:*) Հարուստ և անդլիախան ազգը, յեթև մի քանի գործարան փակվելով կամ մի ժապավեն գործածությանից դուրս ընկնելով բյուրավոր մարդիկ և բյուրավոր գերդաստանք պան ազքատության հետ պատերազմելով կարող են սովամահ կորսվել: Հարուստ և Ֆրանսիական ազգը չյեթև մի քաղաքում մի քանի գործարանք փակվելով մի սհազին բարձրություն գործավորների կլասապարավի գեպի մտրացկանություն: . . . Վո՛չ, հարուստ չև, տուժ ենք և այն դրականագրես: . . . Ի՞նչ հարկավոր է մեզ աղնվականների անհուն հարստության տեր լինելը, ի՞նչ հարկավոր է մեզ անդլիական դրամանոցի հսկայությունը, ի՞նչ հարկավոր է անդլիական կոտավարության գրամի կարտ շլինելը, մինչդեռ միլիոնավոր ժողովրդի կյանքը կախվում է բամբակից ու ժապավենից»:**)

*) Նույնը, յեր. 310—311:

**) Նույնը, յեր. 319—320: Նալրանդյանից 16 տարի առաջ, 1846 թվին մի գերմանացի այսպես էր արանջում կապիտալիզմից «Triersche Zeitung»-ի մեջ. «Մեր քաղաքատնտեսները բոլոր ուժերով ձրգտում են Գերմանիան բարձրացնելու արդյունաբերության այն աստիճանի վրա, վարից Անգլիան այժմ ուրիշ յերկիրների վերա իշխում է: Անգլիան նրանց իղեսայն է: Անշուշտ Անգլիայի այս տեսքը շատ գեղեցիկ է:

Այսպես ուրեմն՝ հակառակ Բեյլերսների, գե-Ման-գելիների, Յունգերի, Townsend-ների, գե-Տրասնների ու Wakefield -ների, վորոնք կապիտալիստական կարգերի սրհներգու լինելով, ծարավի են ժողովրդի թշվառության, — Նալրանդյանը դժգոհ է կապիտալիզմից, վարավիետև այս հիմնվում է սևաբայտ ամբոյի աղքատության վրա: Մինչդեռ բուրժուազիայի իղեսուղի իղեսուր հայրենի հարստության կուտակումն է, և նա ուշադրություն չէ գարձում այս հարստության հավասարապես յաշխվելու վրա, «Յերկրագործության» հեղինակի աշխում, ընդհակառակը, հարստությունն ինքնըստիմեջյան վոչ մի արժեք չունի, յերթ այն չէ հոտում դեպի գորշ մասսան:

Անգլիան ունի յուր կալվածները բոլոր աշխարհամասերում, կարսզանում և յուր ազգեցությունն ամեն տեղ բանեցնել, ունի ամենահարուստ տուկարական ու պատերազմական նավատորմ, գիտե բոլոր առեվարական գաշինքների ժամանակ զաշնաղիքներին շահագործել, ունի ամենաշահապետ առեվարականներ, ամենանշանավոր կապիտալիստներ, ամենահանրազեա գլուխներ, ամենաշքեղ յերկաթուղիներ, ամենահոյակապ մեքենադործներ. անշուշտ Անգլիան այս կողմից գիտելով՝ բախտավոր յերկիր է, բայց Անգլիան գնահատելու ժամանակ կարելի չէ մի այլ տեսակետ ևս ունենալ և այս տեսակետով կարող եր հերավի նորս բախտավորությանից շատ ավելի գերակշիտ լինել գժբախտությունը: Անգլիան նաև այն յերկիրն է, վորտեղ թշվառությունը ծայրահեղության է հասած, վորտեղ տարեկան հարյուրավորներ սովամահ են լինում, վորտեղ բանվորները հիտուն հազարներով հրամարվում են բանելուց, վորտեղ հետով շնայած իրենց նեղության ու

Նալրանդյանը գիտե, վոր վարդաբանությունն ու բարեգործությունը չեն կարող ամօքել այն թշվառությունները, վարոնք արդյունք են հասարակական հարստերություններին, տիրող անասական պայմաններին:

«Ծառերի տերևի վրա ջուր թափելը արժատի չորություն չէ ոգնում. տերևը ստանում են մի բուսական գովություն և այսչափ միայն»:*)

Ուրեմն անհրաժեշտ է կապիտալիստական անասությունը հիմնովին փոփոխել, ստեղծել այնպիսի կարգեր, վարակ հասարակ ժողովուրդը բարձր վիճակի մեջ լինի:

տառապանքներին՝ այնքան չեն աշխատում, վոր կարողանան անկարող սպրել: Անպիսի այն յերկիրն է, ե, թե այնպիսի ինդիվիդուալիստ, վորը կապիտալիզմի հակառակորդ լինելով հանդերձ ջատագով է մինչև կապիտալիստական մասնավոր սեփականություն: Արդյոք յերազմում է նա Ավետյաց յերկրի մասին, թե կարոտով հիշում է Յեզկայտտի ստին ու սխտորը:

Ստառապանքներին՝ այնքան չեն աշխատում, վոր կարողանան անկարող սպրել: Անպիսի այն յերկիրն է, ե, թե այնպիսի ինդիվիդուալիստ, վորը կապիտալիզմի հակառակորդ լինելով հանդերձ ջատագով է մինչև կապիտալիստական մասնավոր սեփականություն: Արդյոք յերազմում է նա Ավետյաց յերկրի մասին, թե կարոտով հիշում է Յեզկայտտի ստին ու սխտորը:

*) Մ. Նալրանդյանի յերկերը, Բ., յեր. 311:

կապիտալիստական անասությունը չատ քննադատներ և ունեցել: Սրանցից վոմանք, այս անասություն թերություններն ընդգծելով, մասնանիչ են յերկ հասարակական այնպիսի կազմակերպություն վրա, վորը պահանջում է յուշոր անասություն, արտադրական կոոպերացիայի հիմքերը և վերացնում է մասնավոր սեփականությունն ու մրցման պատճառած չարիքները: Բայց յեղել են և կան կապիտալի այնպիսի քննադատներ, վորոնք այս անասություն թերի կողմերն յերեան հանելով՝ իրեն իրեն ջարդել են այնպիսի կարգեր, վորոնք զոյություն ունեյին Ֆեոդալական կամ ընդհանրապես մինչև կապիտալիստական շրջանում:

Կապիտալիզմի վո՞ր քննադատներ թվին և պատկանում Միքայել Նալրանդյանը: Արդյոք սոցիալիստական հակառակորդ լինելով հանդերձ ջատագով է մինչև կապիտալիստական մասնավոր սեփականություն: Արդյոք յերազմում է նա Ավետյաց յերկրի մասին, թե կարոտով հիշում է Յեզկայտտի ստին ու սխտորը:

V

Այն հարցումին, թե «ինչ աղբյուրներից կարող է հանել հասարակ ժողովուրդը յուր, չստենք հարստությունն, այլ ապրուստը, և ապրուստ «հավաստի, մշտնջենական և վոչ ատորյա», — Նալրանդյանը պատասխանում է.

«Հասարակ ժողովուրդի համար ուղղակի և մնացած մասի համար անուղղակի, բայց և անհրաժեշտ, ինչպես վորը ձուկի համար, ... միակ աղբյուր ապրուստի և հարստության՝ է յերկրագործությունը: Յերբ վոր մի

ազգ կազմող անհատներին մեծապես մասը պարտադրեցիր պարծու թշնամբ և անհասարակ դուրս գալիս տնտեսութեամբ, այն ժամանակ աչք ազգի բնականութեամբ հարուստ և և ապահովյալ, վերստին նրա հիմք գրված և բնականապես և բնութեան վրա»։^{*)}

Պետք է խմանալ, վոր նայրանդյանը յերկրագործութեան աստիճան չի հասկանում յերկրագործական կապիտալիստական տնտեսութեանը: Վերջինս նույնպէս, ինչպէս գործարանային արդյունաբերութեանը հիմնովում և բանվորի շահագործման վրա, և ուրեմն որս գոյութեան համար էլ անհրաժեշտ է պրոլետարիատի գոյութեանը: Իսկ հայ հրատարակատար հենց այդ պատկարը վերացնելու համար է, վոր աստիճանական յերկրագործութեանը վորպէս ուղիղ ճանապարհ գնացի անտեսապէս ավելի բարձր մի վիճակ: Նրա քարոզչական յերկրագործութեանը մասին գոյողացիական յերկրագործութեանը է, վոր հիմնովում է սեփական, այլ վերստին արդի. աշխատանքի վրա:

Հեղինակը կապիտալիստական տնտեսութեանը համարում է յերկրագործութեան անկման հետեանը:

«Անպիտական ազգի այսքան սարսափելի մեծութեամբ վաճառականութեանը, ձեռագործութեանը (մանուֆակտուրա. Թ. Ա.), վոր այստեղ գրեթէ դարձեալ են նրա բնավորութեան հասկանալիութեանը, ամենին պատահական չեն, այլ հաստատում են նորանից, վոր հասարակ ժողովուրդը հոգ չունի: Վերստին բնական

*) Նույնը, յեր. 313:

նր չկա, հարկն ստիպում է արհեստականով յցնել նորս պակասը»։^{*)}

Ուրեմն, յեթե հասարակ ժողովուրդը հոգ ունենա, ապա այլ ևս ստիպում չի լինել յուր գոյութեանը կապելու ժողովունի ու այլոց հետ: Ժամանակակից սոցիալական մեծ խնդիրը հողային խնդիր է, և յեթե հասարակ ժողովուրդը հոգ ունենա, ապա լուծված կլինի սոցիալական խնդիրը: Այսպիսով՝ բանվորութեանը դեպի գոյու, դեպի յերկրագործութեան կոչողի առաջ ծառանում է այս հարցը, թէ ինչպէս պետք է լուծել հողային խնդիրը. այն է՝ վոր բանդից կարելի է հող ճարել հասարակ ժողովուրդի համար և յերկրաբաժնի՝ ի՞նչ միջոցներ գործադրելով կարելի յե յերաշխափորել, թէ հետագայում, ազգաբնակչութեան բազմանալու դեպքում, անհող մասսա չի դոյանալ: Այս հարցերի պատասխանը կատանանք, յեթե իմանանք, թէ ինչն է պատճառը, վոր հողային խնդիրն, ուրեմն և տնտեսական հարցն այսքան սուր կերպարանք է ստացել: Սրա պատճառը, նախանիցանի կարծիքով, հողի մասնավոր սեփականութեանն է:

«Բռնակալութեանը, վոր նույնն է, թէ ավազակութեան, վաճառել է քեզ հասարակաց ազգի սեփականութեանը: Վոչ նա իրավունք ունի վաճառելու և վոչ գուրավունք ունի յիր գնելու. նա դող է և դուրս գողակից, վորստին հետ յերկրագործները անհատի սեփականութեան չեն. նորս վերստին ապրում են և պիտի ապրեն բոլոր նորս վորտեղը անխափիր...»^{**)} Բաժին սուր ինձ քս հողից,

*) Նույնը, յեր. 316:

**) Նույնը, յեր. 325:

այն ժամանակ չես չեմ աշխատելու բռնի. չես կզգամ ինձ ազատ, մեր իրավունքները կհամարարվին և ճշգրիտ չեղբայրութեանը չեբեան կելնես»։*)

Հոգի անազատութեանը պատճառ և հասարակական թշվառութեան. հոգի ազատութեանը պատճառ կդառնա ժողովրդի իսկական ազատութեան: Հոգն ընդմիջա «ազատելու» միակ միջոցը մնում է հոգի մասնավոր սեփականութեանը վերացնել և այն հատկացնել ընդհանրութեանը:

«Այո՛, փորձերը ուսուցին ի վերջու ևս սպրտուտի կարոտութեանը ստիպում է մի փոքր խեղացի լինել: Հոգը պատկանում է հասարակութեան, վորի ամեն մի անդամը համասար իրավունք ունի համասար քանակութեան վերա յավիտանա ժամանակներին և մի կողմից վաճառելու իրավունք չունենալով, իսկ մյուս կողմից հոգը զործելու և արդյունավորելու իրավունքը անկապակելի պահելով այդ հասարակութեան անդամը և նորա սերունդը հաստատում է յւր կյանքը մի ամուր և ապահով հիմքի վերա և անհար և, վոր նա կամ աղքատութեան հանդիպի և կամ իսպառ կարոտ մնա»։**)

Հոգի հանրայնացումով (обобществление) լուծվում է հոգային ինդիվիդը: Բայց ի՞նչպես պետք է հոգն հանրայնացնել. ո՞ւմ պետք է հատկացնել հոգի սեփականութեանը. ամբողջ ժողովրդին (նացիոնալիզացիա), չըջանի ազգաբնակչութեան (մունիցիպալիտայոն), թե համայնքներին (սոցիալիզացիա): Հետևյալ համաձայն պարզում է, վոր Նալբանդյանը կողմնակից է հոգի համայնացման:

*) Նույնը, յեր. 324:

***) Նույնը, յեր. 319:

«Յուրաքանչյուր քաղաք, յուրաքանչյուր գեղ պիտի ունենա յուր հատուկ հոգը, վոր պիտի սեփական մնա քաղաքի կամ գեղի հասարակութեան»։*)

Հարկավոր չէ շփոթել յերկու տարրեր գաղափարներ. հոգի համայնացումն ու հոգի համայնական մշակութեանը: Նալբանդյանն ընդունելով առաջինը ժըխտում է վերջինը: Նրա քարոզած կարգերում համայնական հոգի վրա հասարակութեան յուրաքանչյուր անդամը վարում է անկախ անտեսութեան: Հետևյալ սուղերը կցրեն այս մասին ամեն կասկած:

«Գեղի ու քաղաքի յուրաքանչյուր անդամը համասար չափով իրավունք պիտի ունենա մի վորոշյալ քանակութեան հոգի մշակելու և գործածելու: Յե՛վ այս իրավունքը պիտի ահե այնքան, վորքան նա կամ նորա սերունդը պիտի բնակվի այն հոգի վրա»։**)

«Յերկրագործուրյան» հեղինակը հոգի համայնացում քարոզելով չէ դատում այցիալիստ, վորովետև և մասնավոր արտադրութեան դավանող է և մյուս բոլոր բարիքների մասնավոր սեփականութեան կողմնակից: Հայ հրապարակախոսն ինդիվիդուալիստ է: Նրա իդեալն է վոչ թե հասարակական այն կազմը, վորտեղ գոյութեան ունի միմիայն ընկերական բաշխում, այլ այն, վորտեղ իշխում են ազգանքային արտադրութեանն ու փոխանակութեանը:

«Սեպհականութեանը այն բանի, — ամփոփում է Նալբանդյանը յուր սոցիալական գաղափարները, — վոր

*) Նույնը, յեր. 318:

***) Նույնը, յեր. 318:

առանց մեր աշխատութեան բնութեանը գնում եւ մեր առջեւ, դողմամբ լինելու եւ յետեւ մեր անուհի հարգութեամբ, իսկ մյուսը ամենեւին վաշտն: Այլ ինչոքիւր եւ աշխատութեամբ ձեռք բերված այն բանը, վոր բնութեանը չե պահում յաւր գողում, վոր բնութեանը չե պատրաստում անմիջապէս, վոր մարդը արվեստական ձանձուրում եւ պատրաստել եւ ի վերջս վորի արժեքը պայմանական եւ մի խոսքով՝ գրամը, վոր մարդը վտասակել եւ: Բայց հողը նա չե վտասակել, հողը նա չե շինել, հողը բնութեանն ե»*) :

Թեև հեղինակը հասկածի վերջում խոսքը մասնավորում եւ միայն փողի մասին, այնուամենայնիվ մյուս սողերից ակնհայտ եւ, վոր բացի հողից ամեն ինչ մասնավոր սեփականութեան շրջանակի մեջ եւ մտցնում, ամեն ինչ, վոր մարդն արվեստական ձանձուրում եւ պատրաստել: Այսպիսով հեղինակի ինքնավերջացումը կասկածի յենթարկող վոր մի նշան չե մնում այլ ևս:

*) Նույնը, յեր. 324: Յույց տալու համար, թե ինչպէս Ռուսիայում անցյալ դարի 60-ական թվականներին ողբ սողորված եր նման գաղափարներով, մեջ ենք բերում Ն. Ոգարինի «Մարդկային հասի բարեկարգութեան» մասին հողվածի հետեւյալ կարգը. Вы видите, братья, что корень всего зла, корень всей розни сословной, поземельная собственность. Пока земля не будет признана достоянием народным, достоянием земства, достоянием общим — царство любви и природы не возможно. Пророк Давид говорит: «Небо небесе — Господе-ви, землю же даде сыновом человеческим». Да и здравый смысл говорит, что отнять у кого

Նայրանդյանը ձգտում եւ ստեղծելու ճիշտ այնպիսի գրախոսութեան, ինչ վոր գոյութեան տներ գաղափարում եւ վորի գեմ բողբում ելին կապիտալիզմի ջատագով Wakefield-ները: Հայ հրապարակախոսի իդեալն եւ՝ վերացնել սեփականագրկութեանը, պայլետարիատը, հետեւաբար եւ կապիտալիզմը. նա հզօնում եւ արանց փոխարենի պաշտպանել անձնական աշխատանքի վրա հիմնված սեփականութեանը. մանր արտադրութեանը: Նա ջատագով եւ իրանախոսակ գոյգացութեան ընդդէմ մտկարայ յմ բարձրագիւրի: Նրա գրողակի վրա գրված եւ արդար աշխատանք եւ վոր գոյութեան շահագործումն*):

нибудь да отдать другому право на воздух, необходимый для дыхания, право на воду напоющую, право на землю родящую нужное для жизни жителям, грешно и безмысленно, и последствия такого неправильна, го права, не могли не быть ложными и губительными, Человек отдельно имеет право на создание рук своих, а то, что дано сыновьям человеческим, на то они имеют право только сообща, братски разчитываясь, сколько по числу душ каждому из общего достояния приходится» Բարդում եւր Չ. Ветринский. «Сердце». СИБ. 1908 յեր. 364: Միայլ կլինի կարծեւ, վոր Նայրանդյանն արտագրում եւ Ոգարինի հողվածը, վորովհետեւ Նայրանդյանի «Յերկրագործութեան» առաջարկի տակնշանակված եւ 1962 թ. մարտի 26, մինչ-ջարանի յողորված եւ Նեցինի Колоդին կից հրատարակվող «Общее Вече» անունով թերթիկի մեջ, վոր սկսել եւ հրատարակվել նույն թվի հունիսի 15-ից:

*) Մուրուսիայի կլինի Նայրանդյանի աշխարհահայտը ֆիզիոկրատները ուսմունքին նմանեցնելը,

Հոգեւորին հարցը անհատական կարիքների պատ-
ճառ համարելն ու աստվծին լուծումով վերջինները փե-
րացնելու միտքը հատուկ չէ միայն XV III ու XIX դա-
րերին: Տնտեսութեան ու հասարակական հասանքների
պատմութեանը ցույց է տալիս, Վոր ամեն անգամ,
յերբ ստորին դասակարգերի դրուքյունը վատացել է,
հանդես են յեկել մարդիկ, վորոնք յերկրագործուքյու-
նը ջտտագովելով, չքավորներին հողաբաժիններ հատ-
կացնել առաջարկելով, իսկ ավելի համարակները նույն
իսկ հողի հանրայնացում քարոզելով մտածել են հա-
սարակուքյան սոցիալական վերհերը բուծել: Հի-
շենք մի յերկու որինակ գոնացան գարերից, վորոնք
մեր հայացքների հորիզոնն ընդարձակելով կնպաստեն
ավելի ճիշտ գաղափար կազմելու մեզ գրողեցնող խրե-
դիրների մասին:

Դեռ ևս Արեւելքում մեզանից մտա 2500 տարի առաջ
Յեսայի մարգարեն բողբոջում էր մեծ հոգասերերի
դեմ, վորոնք մեծ ձկների պես կուլ էլին տալիս իրենցից

վորովհետեւ նախ նալրանդյանը հոյի համայնացման
կողմնակից է, իսկ Փիլոսոփաները՝ հոյի մասնավոր
սեփականութեան ջերմ պաշտպան, և յերկրորդ, վոր
գլխավորն է, հայ կրայարակախոսը մանր գյուղացիա-
կան, անբանվոր տնտեսութեան խղճուրդ է, միևնդեռ
փիլոսոփաները, կենեն ու աշակերտները յերկրագոր-
ծական պրոյետարիատին շահագործող բուրժուազիայի
— կապիտալիստ փերմեր դասակարգի գաղափարախոս-
ները: «Կենեի համար— գրում է Կ. Մարքսը, — յերկրա-
գործութեանը մարդկային աշխատանքը գործադրելու

փորքերին, և պատճառ գտնում անհոյ մասնալի ասա-
ջանալուն:

«Վա՛րձ այնցիկ, վորք հարեն գտուն խտուն և գա-
գարակ առ ագարակ մերձեցուցանեն, զի գլնկերին
հանիցեն. միք է միա՞յն բնակելոց իցեք հերկրի»: *)

Թարմուգիտաները զխտակցում էլին, վոր մանր ար-
տաղըսդ զյուզացու համար յերկրագործութեանից ա-
վելի նպաստավոր գրայմուռը չկա, և վոր անհատական
այլ ճյուղերի գարգացումը զյուզացի գոտակարգին ան-
կուսն է պատրաստում: Բարրի Պապան սուսցանում էր.

միակ ասպարեզն և, վոր հովելյայ արմեր և արտա-
գրում, ալսինքն աշխատանքի միակ ասպարեզն և, վոր
իրականապես կապիտալիստի սեռակեանց արտաղըսդ
հատկութեան ունի: ... Ֆիլոսոփաների սխտեմը կա-
պիտալիստական արտաղըսթեան աստվին սխտեմատիկ
ըմբռնումն է: Այլայունարեքական կապիտալի ներկայա-
ցուցիչը, փերմեր դասակարգը, անբողջ տնտեսութեան
դեկավարն է: Յերկրագործութեանը վարում են կա-
պիտալիստորեն, ալսինքն իրեն կապիտալիստ փեր-
մերի խոշոր ձեռնարկութեան. հողն անմիջապես մշա-
կողը վարձու բանվորն է: ... Արաղըսթեան գրքա-
պատնար հավելյայ արժեք ձեռք բերելն է: Марк.
«Капитал», т. II, пер. Базарова и Степанова, Моск-
ва, 1907, յեր. 330:

Միայն և նույնպես նալրանդյանի ու Չերնիշևսկու
գալմանանքները նույնացնելը, վորովհետեւ ինչպես ա-
սացինք, «Յերկրագործութեան» հեղինակն ինդիվիդու-
ալիստ է, միևնդեռ սուս տնտեսագետն՝ ուտալիս-
կան սոցիալիզմի ականավոր՝ ներկայացուցիչներից
մեկը: Հմմտ. Դ. В. Плеханов. «Н. Г. Чернышевский
СПБ, 1910:

*) Մարգարեութեան Յեսայա. Գլ. Ե, 8:

«Մշակիք հողի և մի գրագրի առուսուրով»^{*)} :

Պահպանողական, բայց խելք բարբին նախատեսող էր, թե ի՞նչ սոսկալի պատահան և գյուղացիութեան համար փողային անսեռութեանը :

Անցնելով Արեմուտը նկատում ենք, վար աշխատեցել անսեռական խնդիրը գլխավորապես հողային հարցի շուրջն է պատվում : Հունական դեմոկրատիայի՝ մի քանի դար շարունակ կրկնվող ապստամբութեանների ժամանակ անընդհատ լսում ենք «հողերի բաժանում» նշանաբանը, վոր և մերթ ընդ մերթ փոխվում և հողի հանրայնացման հրավերի : Աթենքում, Կերկիրայում, Սամոսում, Արգոսում, Մեգարայում, Կիմեյում, Էլեանիում, Սիրակուզայում, Գերասում, Պերգամոնում ու մանավանդ Սոլարայում կատարված հեղափոխությունների հետևանքը հաճախ յեղեղ և հողերի բաժանումն ու կամ թե հանրայնացումը : Թե հույն ամբոխի շարժումների ժամանակ վորքան մեծ դեր էր խաղում հողային հարցը, վկայում և Նյուպոլի մեծ փերիսոփան—Պլատոնը :

«Համախոս — սուսում և նա, — փորձում են սեփականություն վորոշ հավասարություն սահմանել տասանելով հողային սեփականություն և վորչեղացնելով պարտքերը և գիտակցելով, վոր սասնց այս միջնացների չե կարելի բավարար չափով հավասարութեան իրականացնել»^{**)} :

^{*)} В. Святловский, «Очерки по истории политической экономии», Եր. 76 :

^{**)} Р. Пелман, История античного коммунизма и социализма, Եր. 449 :

Իսկ Ապենինյան թերակղզում, վորտեղ գասակարգային ստեղծութեանը յետում և լավայի պես, վորտեղ սեփականապարկ ու կատարած մասան յուր յեղջուրների վրա սուսմ ցնցում և սարսափ և ազդում յերկրասան Հոտովին, աշխտեղ կոչը դեպի հողը պարզ յավում և սնանկ սլերսի ու սնանկ սրբախարխափ առաջնորդների, «դեմագոգների» ճատերում :

«Մինչև անցամ անասափ գաղանները, — գուշում և գասնությամբ ազնիվ Տիրերիս Գրակիսը, — ունեն իրենց վորջերը, իսկ այն քաղաքացիք, վորտեք կավում են սերութան պատվի ու փառքի համար, չգլխեն, թե վորտեղ գնեն զլուխները : Նրանց վորչինչ չի մնացել սղից ու լույսից : Նրանք ստիպված են առանց ապաստանի թափառելու ընտանիքները հեռ : Միթե անամով կեղծավորութեան չե՞, վոր կոնսուլները ճակատամարտից առաջ համարձակվում են ստեղծարար կանց, վոր նրանք կավում են բնասանկան հարկի, սըրբութեան սեղանի ու նախնիների շիրիմների համար : Վորովհետեւ վորտեղ և նրանց հարկը, սրբութեան սեղանն ու նախնիների շիրիմները : Նրանք պեսք և իրենց սրբայնք թափեն ու մեռնեն վոր թե հայրենիքի, այլ նրա համար, վոր ուրիշները խեղդվեն սերձութեան մեջ և հարստանան : Յեվ այն վարդիկ, վորումք ախեգերիքի տերեր են կոչվում, մի կտար սեփական հող չունեն»^{*)} :

Նույն իսկ ընդհանուր պատմութեան գասազրքերից հայտնի յե, թե հողային հարցը Հոտովում ի՞նչ մեծ կոնֆլիկտի պատճառ զարձակ, կոնֆլիկտ, վորտեք ժամանակ ժողովրդի շահերի պաշտպան «դեմագոգների»

^{*)} Р. Пелман, Եր. 563

պահանջն եր՝ բաժին հանել սպասող զյուզացիութեանն ու պրոյեկտներն աչն հսկայական կարգածներէն, վոր ունէր տիրող դատակարգը :*)

Նոր դարի սկիզբներում, յերբ սոցիալական խնդիրները շուրջը հիմնական նման քաղաքական կուսակցութեաններ զեւ եւ չեյին կազմվել եւ դատակարգերի արեւտեսական պահանջներն անգամ կրօնական պայքարի կերպարանքով էյին հանգեւ դալիս, հոգը մասնավոր սեփականութեանից ազատելու կոպմնակից էյին քրիստոնեական մի քանի ազանդներ :

«Մենք բոլորս յեզրայրներ ենք,—բարսում էյին անարատարտներն ու զյուզացիական մեծ ազատամբուշտան մասնակիցները XVII դարում,—ե մեր բնդհանուրիս հայրն Ազամն է : Վո՞րակցից ե կոչումների ու հարսութեան այս մեծ տարբերութեանը, վո՞րակցից ե այս մեծ անդունդը, վոր ստեղծել ե բոնակալութեանը ե դրել մեր ու աշխարհիս հզարները միջև : Ի՞նչու մենք տնքանք ազատութեանից ե մաշվենք աշխատանքից, մինչդեռ ուրիշները թաղված են վախիճների մեջ : Մի՞թե մենք բարիքների հաժատարութեան իրավունք չունենք, բարիքների, վորտնք հենց բնութեանից ստեղծված են բոլոր մարդկանց միջև հաժատարտեւ բաժանվելու համար : Հողն բնդիւսնուրի սեփականութեանն ե, վորի մեջ մենք էյ ունենք մեր մասը, վորը սակայն

*) Հույն-հռոմեական ամբուխ շարժումների ու իզեայների մասին մեծարժեք փաստեր ե տալիս Պետրմանի յիշյալ գիրքը, սակայն հեղինակի աշխարհայացքն ու շատ յեզրակացութեանները մեղծելի յեն :

խել եւ մեղանից : Յե՞րբ ենք մենք զիջել մեր հայրական ժառանգութեան այս մասը : Թող ցույց տան մեզ աչն պայմանը, վոր կողել ենք նրանց հեա : Տվե՛ք ուրեմն մեզ, աշխարհիս հարուստներ, ազահ գիշատիչներ, մեր ստացվածքը, վոր անարգարութեամբ հափըշտակել էք մեզանից . ե դո՛ւ, թշվառ հոտող Կրիստոսի, մի՞թե հափխարան սեւաք ե տնքատ աշխարհիկ ու հոգեւ վոր իշխանութեանների լծի տակ ճնշվելով :»*)

Հողի մասնավոր սեփականութեանը վերացնելու կուսակցի էյին նաե կրօնական մի ուրիշ ազանդի հետեւորդներ էյ : Խոսքն Անդրալի լեկլերները մասին է : Սրանք էլ հոգային հարցի լուծմանը մեծ նշանակութեան էյին տալիս : Սրանց կարծիքով՝ յերբ բոլորը հողի հաժատար բաժին ստանան, «աչն ժամանակ չեն լինիլ վոր ազատներ ե վոչ էլ ձրիակերներ» : Լեկլեր հեղինակներից մեկը, Չեմբերլենը, «Այբատ մարդկանց փաստարան» կոչվող գրքում, վոր լույս ե տեսել 1649 թվին, թշվառութեանները վերացնելու համար ստաջարկում ե հողն ազգայնացնել (նացիոնալիզացիա) :**) Մի ուրիշ լեկլեր հեղինակ, Ջերարդ Ռինստանդլը, 1651 թվին հրատարակած «Ազատութեան սրենքը» անունով գրքում նույնպէս հոգային հարց ու սոցիալական խնդիր նույնն ե համարում :

«Հողը չի պատկանում վոչ վոքի,—ասում ե Ռինստանդլը,—ոչ ըստ ծագման իրավուեքի ու վոչ ըստ նվաճման իրավուեքի : Յերբ յեղրայր յեղրորից խլում

*) В. СВЯТЛОВСКИЙ, Կեր. 231.

**) Նույնը, Կեր. 255—256:

ե հոյր, ևրան ևնշում և սարկացնում է: Իսկական հասարակապետական ազատութիւնը հոյրից ազատորեն ոգտւիելու իրավունքի մեջ է ամփոփւած»: *)

Այս քաղաքացիական և Նալրանդյանի յերկից բերած հաստատութիւնները համեմատութիւնը ցույց և ստալիս, թե փորքան հարապատութեամբ հայ հեղինակը վերաբարտարում է իրենից հարցաբարտար և հարաբարտար աստիներ աստջ սպրած մարդկանց մտքերն, անշուշտ ասանց դիտակցելու, վոր կրկնում է նրանց ասածները:

Հորդանանի և Արշիպետարի, Յեղեյան ծովի և Տիբերի, Հոննոսի և Թոյմզի ամերին հնչվող այս քաղաքների և Նալրանդյանի ասածների նմանութիւնը հաստատում է այն միտքը, թե զազախարները բնածին չեն, այլ արդյունք միջավայրի: Տեսնում ենք փոխախտութիւնները վնասում կամ նպաստում են մարդկանց շահերին, դասակարգերն սկսում են արտունջի և կամ գահութեան շտանջներ արծակել, իսկ իրեոյրդներն իրբի

*) Նույնը, յեր. 245—246: Թեև մեր ծրագրի մեջ չե մտնում XVIII և XIX դարերի հեղինակներից որինակներ բերելը, վորովհետև սրանք ամբողջ հանրածանոթ են, այնուամենայնիվ ամբողջ չենք համարում հիշել XVIII դարի հեղինակ անգլիացի Թոմաս Սպենսին (1750—1814), վորը մտացւում է և սովորաբար չե հիշվում անասալիտութեան և հասարակական հասանքների պատմութեան մեջ: Այս հեղինակը «Միջոցի արեգակ» անունով գրքում քարոզում է այնպիսի մըքեր, վորոնք նույնքան նման են Նալրանդյանի ասածներին, վորքան և Ն. Ազարեկին: «Այս սխտածի հիմնական թեզիսները հետեւյալներն են, — գրում է Անտոն Բենդերը. — Սպենսնը բնորոշում է, վոր մի վորեէ յերկ-

ճայնահաւաք գործիքներ ժողովելով այս հնչյուններն՝ ուժգնութեամբ հնչեցնում են, վորմանք իրբի զայրացին բողոք, իսկ ուրիշներն էլ իրբի ցնծալի որհնդութեան:

Նալրանդյանին չէր վիճակւած լինել իրեոյրդ այն հայթական զատակարարի, վոր նրա որբերից սկսած մինչև վ աչժմ բյուրավոր գահեր տալով բարձրանում է պատմութեան յերկիրով: «Յերկրադործութեան» հեղինակին բաժին ընկած լինել ջատագով այն հասարակական խմբի, վորին արտում է պատմութեանն անիվը մահացու վերքեր տալով:

VII

Ասացինք, վոր Նալրանդյանի համար իրեոյրդական է այն գրութեանը, վոր գոյութեան ուներ գաղութներում. նա ջատագով է այնպիսի կարգերի, յերբ դոյութեան ունեն հոյի համայնացում, մյուս բարիքներ մասնավոր սեփականութեան, մանր արագրութի մասնավոր սեփականութեան և գրում: Հաջորդ խնդրը, թեյան, փոխանակութեան և գրում: Հաջորդ խնդրը, վոր նկատ ժողովրդի բարոյութեան այն պայմանները, վոր զծել է հեղինակը: Վոր հերոսի հոյր սեփ վրա պետք

րում ապրողները գոյութեան իրավունքի հիմամբ ունեն նաև նույնպիսի իրավունք հոյի և պան պատկանող իրերի վրա: Այն հանգամանքը, վոր հոյատերերն անիրավացի չափերով հոյեր են սեփականեցնում, պատճառ է դառնում բանվոր դասակարգի բողոք բըշվառութեանների, վորովհետև այս դասակարգը հիշվառութեանների, վորովհետև այս դասակարգը հիշվառութեանների շնորհիվ հարկադրւած է աշխատելու թե յար և թե անգործ հոյատերերի համար և բացի այս՝ ստիպւած է նաև ուրիշ գոյատերութեաններ ա-

և ծանրանա այս իդեալն իրականացնելու դժվարությունը. գթասիրտ միտալեոս⁶, հարուստ բարերարի⁶, լուսավոր ինտելիգենցիայի⁶, ամբողջ հասարակության, թե նրա մի մասի:

Այս խնդրով անհրաժեշտ է զբաղվել այն պատճառով, վոր հասարակական գործչին բնորոշելու համար նշանակաւթյուն ունեն վոչ միայն նրա իդեալներն, այլ և այս իդեալներն իրագործելու համար առաջարկված միջոցները: Իդեալներն բառինքյան էլ անիրագործելի, ստատիստական կարող են լինել, բայց հաճախ ամենից ավելի իրագործելի, բնայիստական իդեալներն անդամ դառնում են ստատիստական՝ շնորհիվ այն հանդամանքի, վոր սրանց հասնելու համար առաջարկված միջոցներն անհարմար են: Այսպէս՝ մի ֆուբիէ, վոր հընարավոր իդեալի, սոցիալիզմի, իրականացման հույսը պնում է հարուստ բարերարի վրա, նույնքան ստատիստ է, վորքան մի Բուսսո, վոր անհնարին իդեալի յի ձրդատում, յերբ յերազում է վերագառնալ գեպի փակ անտրին անտեսությունը:

նելու: Ուստի հողի սեփականությունը պետք է հանձնել համայնքին կամ ժիխն, այն պայմանով, վոր բոլոր բնակիչները հավասար իրավունք ունենան հողի վրա, և վոր համայնքը յուր հողային սեփականությունը որքիշին ծախելու իրավունք չունենա: ... Այս հողային սոցիալիզմը, վոր տեսակվում է մասնավոր ու համայնական տնտեսության միջև. շարժական սեփականությանը չէ վերաբերում»: Проф. Антон Менгер. «Завоевание рабочим его прав». Пер. А. П. Люблинского. СПб., 1906, стр. 67:

Նալբանդյանի՝ իդեալներին հասնելու համար առաջարկված միջոցերի քննությունը մասնավորապես հետաքրքրական է նաև այն կողմից, վոր կպարզե, թե ի՞նչ հարաբերություն կա հայ հրապարակախոսի ու գասակարգային կոլի միջև:

Միջանկյալ ասենք, վոր իդեալովի ու գասակարգային կոլի միջև կարող է լինել յերեք տեսակ հարաբերություն. պատկանելության, խմայության ու վերաբերմունքի: Գասակարգերի բաժանված հասարակության մեջ ամեն մի հեղինակ պատկանում է մի գասության մեջ ամեն մի հեղինակ պատկանում է հույս հարակալի կամ այն կողմը և մասնակցում է յուր հասարակական խմբի՝ գանապան ասպարեզներում մղած կոլին, որիչ խոսքով՝ գասակարգային իդեալով է: Բայց գասակարգային իդեալներին շատերն Ավետաբանի այն խոսքի համաձայն, վոր ասում է, թե «վոչ գիտեն՝ զինչ գործեն», չեն գիտակցում, վոր հասարակության պատմությունը գասակարգային կոլիների պատմություն է, ուստի և վարելի վերաբերմունք չեն պույց տալիս գեպի գասակարգային կոլիը: Կան և այնպիսիները, վորոնք թեև գասակարգային իդեալով են, մասնակցում են գասակարգային կոլին ու գիտեն, վոր պատմությունը գասակարգային կոլիների պատմություն է, բայց և այնպես սարբեր վերաբերմունք են պույց տալիս գեպի հասարակական խմբերի պայքարը. վոմանք համակրությամբ են վերբերվում այս կոլին, ընդունելով, վոր այս է հասարակական սայլի կոլին, ընդունելով, վոր այս է հասարակական սայլի շարժումը հնարավոր դարձնող միակ անիվին, իսկ վո-

մանք ել համակրում են, համոզված լինելով, վոր այս մեծ խոչընդոտ և պատմական դարգացման համար:

Որինակ, վերահաստատման (րեստավրացիա) շըրջանի Փրանսացի պատմադիրները—Գիլգո, Տիեբրի ու Մինիե, սոցիալիստներից Բլանկի, Մարքս ու Ենգելս թե դասակարգային իդեոլոգներ եյին, (առաջինները՝ բուրժուազիայի, վերջինները՝ պրոլետարիատի), թե դեմոստակցում եյին, վոր պատմությունը դասակարգային կռիվների պատմություն և, և թե կողմնակից եյին դասակարգային կռիվ քաղաքականությանը: Արեվմտյան Յեվրոպայի ուսուցիտ սոցիալիստները, հատկապես Ծուրիեն, իսկ Ռուսաստանից Չերնիշևսկին, Ընդհակառակը, թեև դասակարգային իդեոլոգներ եյին և պիտեյին, վոր դասակարգային կռիվը պատմական իրողություն և, բայց և այնպես չեյին համակրում այս կրօնին: Ռուս մեծ քննադատի կարծիքով հասարակության՝ թշնամի դասակարգերի բաժանված լինելը մեծ արդելը և այն հասարակության սպազան բարելավելու համար: Յեւ վերջուպես հեղինակները հսկա մեծամասնությունը տարբեր վորոշությամբ դասակարգային ձգաւժների ներկայացուցիչ լինելով հանդերձ դադարաւ անդամ չունի դասակարգային կռիվ մասին, այսինքն վոչ ծառայութ և հիշյալ պատմական իրողությանը և վոչ ել վարեև վերաբերմունք և ցույց տալիս դեպի այս կռիվը:

Միքայել Նալբանդյանը վերջին տեսակի հեղինակներից և: Ինչպես մինչաթմյան վերածությունը ցույց և տալիս և ինչպես հետո ուրիշ վաստեր ավելի կհաստատեն, «Յերկրագործության» հեղինակը խիստ վորոշ ար-

տահայտում և յուր դասակարգային գույնը, յերբ պաշտպանում և մանր յերկրագործական անտեսությունը: Նա վոչ միայն յուր հասարակական խմբի իդեոլոգն և, այլ և թեորևաիկը, վոր վաստերով ու արամբարանության միջոցով աշխատում և ապացուցել յուր դասակարգի համար ձեռնուտ անտեսական կարգերի կարեւորությունը: Բայց և պիտեա Նալբանդյանը դասակարգային կռիվի մասին զաղխվոր չունի և յուր սոցիալական ծրագիրն իրագործելու համար դասակարգային կռիվը նրկատի չի ունենում:

Այս տեսակետից Նալբանդյանի մտքերը լավ բժրոնեսու համար հարկաւոր և հիշելի նրա այն խոսքը, թե բոնակարությունն և հասարակաց սեփականություն կազմող հողը սեփականելով ի վաճառ հանել ուրեմն բոնակարությունն և չարիքների աղբյուրը: Արդ հանուն ինչի՞ պետք և կռիվել բոնակարության դեմ:

«Այսոր ճնշված մարդերի համար,—բացառութեամբ և հեղինակը,—ազգությունն և նոցա միակ գըշը վոր կարող և բացվել բոնակարության ընդդեմ: Ազգությունն և միյակ հնարը դեմ դնելու նաև լուսավոր բոնակարության, յեթև միայն բոնակարությունը կարող և լուսավորել կամ լուսավորվելուց հետո հարասեւ իբրև բոնակարության, կրկնում ենք մեր գարու յերեկելի մտածողներից մինի հետ»*)

Այս հատվածը միանգամայն պատասխանելով մեր վերոգրյալ յերկու հարցին պարզում և նախ, վոր հայ հրապարակախոսի աշխարհահայացի մեջ դասակար-

*) Մ. Նալբանդյանի յերկերը, Բ. յեր. 372:

զային կովի հիշատակութեան չկա, և յերկրորդ, վոր
նա նսնուսն ազգութեան պարգաճ դրոշի շուրջը կամենում
է հավաքել բոլոր նրանց, վորսնի՛ք ձգտում են քարելավե-
լու իրենց տնտեսական դրութեանը: Դասակարգային
կովի փոխարեն նա բարոզում է ազգային կովի: Սա-
կայն նրա զավանած ազգութեանը շատ և սարբերվում
ուրիշների քարոզած ազգութեանից: Մինչդեռ բազմա-
թիվ խախտած սպեցիների համար ազգութեանը մի վե-
րացական, ամեն հանդեմանքներում զավանելի գաղա-
փար և, վորին պետք և ստորագրավեն մյուս ամեն ձրգ-
տումները, նայրանդյանի համար ազգութեանը մի ի-
զեա և, վոր պետք և ծառայե հացի խնդրին:

Հայ հրապարակախոսի քարոզածը մատերիալիստա-
կան նացիոնալիզմն է, վորն աչքի չէ բնկնում ժողովրդ-
դասերական բնույթով:

VIII

Առաջին համակրելի կետը նայրանդյանի՝ ազգու-
թեան վերաբերմամբ ունեցած հայացքի մեջ այն և, վոր
նա հակառակ է բոնացոյ, հափշտակոյ ազգութեան:
Հայ հրապարակախոսն ազգասեր լինելով հակառակ է
սոցալմոյութեան, վոր խլում է ուրիշ ազգերից քաղաքա-
կան ու անասական իրավունքները, զրկում է ապրուս-
տի միջոցներից, հափշտակում է յերկիրներ, ախրում է
սոցալմոյութեամբ բազմաթիվ գաղաթմների և կեղծափորու-
թեամբ ազնոյակում, թե այս բոլորը կտատարում է քա-
ղաքակրթութեան համար: Հարձակոցական չովինիզմն
ստեղծ չէ նայրանդյանին:

«Վնասակար և անիրավ է այնպիսի ազգութեանը,

վոր ամեն ուրիշ գոհում է յուր կյանքին. ազգութեան
չէ այն, այլ կույր ֆանտիկոսութեան, վոր հիմք չունի
և կիրքի բնավարութեամբ յերևում է մարդու մեջ: . . .»
Հերիք է վորչափ կույր ֆանտիկոսական ազգութեանը
ունի յուր յետական կողմերը. հերիք է ասում ենք, վոր
մի ազգութեան յուր մի շամփուր խորովածի համար
մորթում է մյուս ազգութեան յեզրը . . .»

Մինչդեռ ժամանակակից քաղաքակիրթ ազգերը
ձգտում են հավասար իրավունքն իրականացնելու ազգի:
Հասարակութեան ներքին կյանքում, ներազգային շրջա-
նում, նայրանդյանը հավասար իրավունք քարոզում և
նաև հասարակութեանների միջև, միջազգային ասպա-
րեզում: Բարոյական այն սրենքը, վոր պատվիրում է,
թե «արա՛ ուրիշներին այն, ինչ վոր կկամենայիր անեն
թե «արա՛ ուրիշներին այն, ինչ վոր կկամենայիր անեն
քեզ մարդիկ», և վորը պարտազլր է համարվում անհա-
տական հարաբերութեանների ժամանակ, հայ հրապա-
րակախոսը պարտազլր է հռչակում նաև ազգային հա-
րաբերութեանների ժամանակ: Այս սկզբունքը կեղծ
բրիտանացիների նման չէ քարոզում միայն յեզրու-
յտական քաղաքակիրթ ազգերի, այլ և յերկրագնդի
խորթ գաղաթմների—կրտսակիրթ ու վայրենի ժողովուրդ-
ների վերաբերմամբ էլ: Սպասողեն աշխարհակալու-
թեան, գաղաթմային արյունարբու քաղաքականութեան
փոխարեն նա ջատագովում է ազգերի յեզրալրու-
թեանը:

«Ազգութեանը հարկավոր է և սպասակար այն ժա-
մանակ, յերբ նա չէ բարբառվում իրրե մի բույեյական
կայծ, իրրե պատահական և հանդամանքներից կախ-

*) Նույնը, յեր. 372:

**) Նույնը, յեր. 361:

մանր վաճառականությանը և այլն, ինչպես խաբխուր
պատեր կամաց կամաց փուլ էլին դալխ ու յուժփում
նոր անասության կատարի հարձանքների մեջ: Ար-
դյունարերությանը քաղաքում կուլ էր ապխտ ար-
հեստավորին, իսկ գյուղում՝ յերկրագործին: Բանույի
սեփական աշխատանքի վրա հիմնված անասությանն,
այսինքն մանր արտադրությանը, հողեփարքի մեջ էր:

Հայաց աշխարհի բոլոր բաժիններում, ի միջի այ-
լոց նաև՝ Տաճկահայաստանում, փոքր Նալբանդյանի
հոգևորի միակ առարկան է «Յերկրագործության»
մեջ, այս տեսարանի կատարյալ հակադասներն էր
իշխում: Հասարակական կազմը հիմնվում էր մանր
արտադրության վրա. ազգաբնակչության հսկա մե-
ծամասնությանը կազմված էր գյուղացիներից ու ար-
հեստավորներից: Բոլորովին չկար արդյունարերու-
թյան յերկու անհրաժեշտ դասակարգերով. չկային
կապիտալիստներ ու գործարանային բանվորության:
Բուն յերկրում շատ չնչին տակս էլին կազմում առևի-
արականները, փոքունը համեմատաբար ափելի բազ-
մաթիվ էլին գաղթավայրերում: Ազգաբնակչությանը,
մանավանդ գյուղացիներին, սաստիկ ճնշում էլին պե-
տական հարկերը, պաշտանյաների կեղեքումներն ու
ավագակարարս ցեղերի հարձակումները: Ներքին չա-
րիքներից գլխավորը վաշխառությանն էր, փոքր սա-
կայն գես ևս չէր գրավում տաճկահայի վիճակով հե-
տաքրքրվող հեղինակների ուշադրությանը:

Այն ժամանակ, յերր Նալբանդյանը գրում էր
«Յերկրագործությանը» (1862 թ.), Տաճկահայաստա-
նում տիրում էլին մոտավորապես այնպիսի կարգեր,

փոքունը հեղինակի ցանկացածն էլին. այսպեղ իշխում
էր մանր արտադրությանը, վոր նրա կարծիքով միակ
ուղից ճանապարհն էր շքավարությանից դուրս գալու
համար: Սակայն և այնպես հայ հրապարակախոսը
չստ մտայլ գույներով է նկարում տաճկահայի գրու-
թյանը: Նրան մեծ յերկյուղ է ներշնչում տևտեսա-
կան զարգացման այն տեղեկեցիան, վոր նկատվում է
Տիգրիսի ու Յեփրատի հովիտներում:

«Ազգը որքատորե թույնում է յուր յերկրները և
կենտրոնանում է քաղաքներում: Աղքատությանը սախ-
պում է նորան թողուլ յուր տունը, յուր ընտանիքը,
յուր ամուսինը, յուր դավակները և գնալ Պոլիս կամ
այլ քաղաք աղքատությանից ազատվելու համար:
Բայց այդ տեղերում ևս նորան հանդեպ է գալիս էյա-
պես նույն աղքատությանը, գուցե մի փոքր քաղա-
քային ամոք կերպարանքով»:^{*)}

*) Նույնը, յեր. 339—340: Արդարությանը պա-
հանջում է ասել, վոր Նալբանդյանի քննադատությանն
այս կետում մակերևութային է, վորովհետև չէ
բացատրում, թե ինչն է ժողովրդի աղքատության
պատճառը, վորից ստիպված սա գլխում է գեպի պան-
դիստության ու այլ գրադմուքներ: Հետագայում ա-
վելի գիտակից անձինք վկայեցին, վոր տանկահայի
վելի գիտակից անձինք վկայեցին, վոր տանկահայի
պատճառը, ուրեմն և պանդիստության պատճա-
ռը վա՛չ այնքան պետական հարկերն են, պաշտոնյա-
նը վա՛չ այնքան և քաղաքի հարձակումները, վոր-
նքի կեղեքումներն ու քաղաքի հարձակումները, վոր-
քան հայ վաշխառուների հարստահարությունը, վոր
վորային տևտեսության զարգացման հետեվանք է:
Տանկահայ հարցի ուսումնասիրության համար այս
կարծիքն այնքան նշանավոր է ու հատուկ ուշադրու-

«Յերկրագործուրյան» հեղինակին տխրեցնում է վոչ քե պանդխտուրյանն ըստ ինքյան, վոչ քե հայրենիքից ստար յերկիր գնալը, այլ այն, վոչ ժողովուրդը գյուղից դեպի քաղաք է գնում: Վերջին շարժանը, քաղաքներում կենտրոնանալուն նա հուկասակ կլինեք նաև այն գեղբուս՝, յեթև տաճկահայը գնար վոչ թև հայրենիքից գորսս գանված կենտրոններն, րյան արժանի, վոչ անկրամեշտ եմք համարում ամբողջուրյամբ մեջ բերել:

«Տանկահայաստանի քաղաքացին անհամեմատ բարձր է գյուղացուց ամեն կողմից, վորքի վեմ գյուղացին չի կարողանում մրցել, այլ յենթարկվում է նորա ազդեցությանը: Վորովհետև աշխարհի հայ քաղաքացու բնավորության մեջ ազգային բարեմասնությունից վաշինչ չկա, այլ այդ ազդեցությունը բոլորովն յենթակառնաճարական յիներով՝ նա գյուղացու հարբատահարեցիկ շարժումը սուաշին տեղն է բռնում: Այնուհանդերձ յրբտանն յի տան «խեղ-բարաքյաթը», «մեռանի սուրբ ավազանի շնորհի ազդեցությունը» նվազ նշանակություն ունին: . . . Ամեն կարգի քաղաքացիները, վորոնք պարապում են աստուտով, արհեստներով, տերության ծառայությանով, յուրյանց պարապմունքները արտադրած ուղղակի շահերով ունենալ: Այնուհանդերձ ցանկանում են և կողմնակի շահեր ունենալ: Այն ամենքը յուրյանց ուժի ու կարողության շարք յուրյանց պատրաստ ծառայությանը հայտնում են գյուղացուն՝ հողալով նորա զգեստակները պիտույքը և փոխառական գրամ: Այս սպերացիայի մի տեսակը անվանվում է «սալաթ»: Քաղաքացին գյուղացուն տալիս է զիցուք մի սոմանյան փոսիկ կամ նորա արժույթյամբ սպրանք, վորը պարտական է մերձակա հանձնին մի վսակու փոխատւությանը յերկու շաբի ցորյան տակուս վճարել: աշխարհի գնով յեթև հաջվներ, մի շաբի արժ.

այլ բուն յերկրի քաղաքները: Հեղինակը վեմ է պանդխտության վոչ այն պատճառով, վոր աշխարհագրական տեղափոխություն է այս, այլ վոր սրա հետ կապված է ժողովրդի գլխավոր զբաղմունքի փոխախությունը: Յերկրագործ մասսան յերկու ծայրից քայլալվում է. մի մասը դառնում է սեփականագործ վարձվոր, իսկ մյուս մասը դիմում է դեպի անվտուրը: Թեև տաճկահայերը մեծամասնությունը զենես կղած է հողին, բայց և այնպես անտեսական գար-

մի մեջլիլյա. մի սոմանյան փոսիկն կազմված է հինգ մեջլիլից: ուրեմն քաղաքացին գյուղացուց վեց ամսվա ընթացքում մի սոմանյան փոսուսն ²/₅, կամ 5 մեջլիլից յերկուսը տակուս է ստանում: Յեթև վեց ամսվա ընթացքում 10 մեջլիլյան բերում է շոր տակուս, նշանակում է, վոր տարին ութ տակուս է ընկնում, կամ հարյուրին ութսուն: Այս ձևը ստորիճանարար սնանկանալու ձևն է, վոչ հետզհետե գյուղացու կայքը, հողը ընկնում է վաշխատուի ձեռքը և այնուհետեվ նա դառնում է քաղաքացու արձաքազին սարուկը: Կան գյուղացիներ, վորոնք հանկարծական պիտույքի համար ծախում են յուրյանց ցանածի, աշնցանի կամ զարնցանի կանաչը. վորովհետև այդ կանաչները արդյունքը ակներեվ չէ, քաղաքացիք ամենաշնչին գներով տեր են գառնում գյուղացու քրանած արդյունքին: Յերբ գյուղացին վորեն կերպ վաճառվում է, սրինակ յեթև գոգանում, հափշտակում են նորա յեզները, անասունները, կամ վարակիչ հիվանդություներից ստակում են, յեթև ալրում են նրա վեզը և մարազը, յեթև յերաշախց, մուրից, մկներից վոչ նշանում է նորա ցանքը, այսպիսի շահար մի տեսակ հանգամանքներին յենթարկված գյուղացին, փոխատու ընկերություններ շլինելուց վերտականդներու մտքը դիմում է վաշխատուին, դնում է

դացման այս տեղեկեցիան—վարձկան մշակութան ու վաճառականութան զարգացումն որհասական հեռավանքներ կարող է ունենալ:

«Այն աշխարհներում, ուր հասարակ ժողովուրդը հող չունի, ուր չի կարող յերկրագործությամբ ապիրտ վտտի սակ յուր սունը, տեղը, կայքը, հողի սեփականութան իրավունքը և ստանում է ցանկացած փոխը այնպիսի պայմաններով և տակաւ, վոր յերբեք չի կարողանալու հասուցանել ու այսպիսով դուրսդուրան ընտանիքներ կործանելու ևն անկանգնելի կերպով: Վարջան վոր գյուղերը ավելի մոտ են քաղաքին, այդ շափով ել ավելի խիստ յենթարկված են քաղաքացոց հարստահարութեանց և ավելի շատ աղքատ են: Որինակ Վանա շրջապատի Թիմար անունով գավառի և Ռչտունյաց գավառի հյուսիսային մասը վասպուրականի բոլոր գավառներումը ամենախիստ կերպով հարստահարված, ամենից սաստիկ վտանգված աղքատներն են. դրանցից է կազմված վանեցի մշակների մեծամասնութեանը: . . . Այժմ գյուղացին յերբ վոր վտանգվում է անարդար կառավարութեան կաշառակեր պաշտոնյաներից, քոյերի հափշտակապիւրութեանց, ևն դիմում է յուր կարող ազգակցի ոգևութեան. իսկ այդ արեւակից կեղծավորք քաղցր խոսքերով տիրում է նորա ստացվածքին, դնում է նորա վզին հալիտեանական ստրկութեան տառասուկր . . . Գյուղացին տիրութեան պաշտոնյաների հարստահարութեան տակ կեծում է, քոյերի հարստահարութեան տակ տրտնջում, բողբոջում է, հարստահարող ազգակցի հարստահարութեան տակ անուսուց զոհի պես վաջնջանում է: Այսպես են փոխակերպվում համեստ յերկրագործ ընտանիքներից որահացին կարոտ մշակները»: Ա. Թոմասյան. «Մասին լեռների հարավային ստորոտներ» մասն Բ. Թիֆլիս, 1882, յեր. 14—16 ու 22:

րել, նա կենտրոնանում է բազաքներում և մայրաքաղաքներում և այս կենտրոնացութեան շափով սաստկանում է և . . . աղքատութեանը: Այնպես է հասարակ ժողովուրդի վիճակը մի այնպիսի աշխարհում, վոր բոլոր յերկրագնդին բաժանում է յուր ձեռագործքը, վոր պետք ունի միլիոնավոր ձեռքերի (ակնարկում է Անգլիային. Թ. Ա.), ինչպես ուրեմն կլինի այն աշխարհների վիճակը, ուր անգլիական արվեստի և ձեռագործութեան և հազարերորդ մասը չկա, և յեթե այս աշխարհները հասարակ ժողովուրդը չկա, և յեթե այս աշխարհադաք կամ այլ դաժողու յուր հողը և յերթմ մայրաքաղաք կամ այլ գաղտական քաղաքներ: Ասել հարկավոր չէ, քանզի մինչև այստեղ ստանդերիցս հեռուցները շատ հեշտ է»^{*}

Հանրածանոթ է Նայրանդյանի սրտաչարմ նկարագրութեանը, վորը մեջ պատկերացնում է, թե ինչպիսի մշակն «իրբն գրտտ, իրբն մեքենա ծառայելով արտասովելի ոտարութեան մեջ ստան քսան տարի կամ մեռանում է այնտեղ՝ թողնելով յուր բնասնիքը ծայրացյալ թշվառութեան մեջ և կամ վերադառնում է գերացյալ թշվառութեան մեջ և կամ վերադառնում է գերացյալ յերկիրը . . . հասակն ստամ, ուժաթուփի և թուլանամ, վերադառնում է նա միմիայն յուր ներկայութեամբ յուր, աղքատ ու կարոտ ընտանյաց թխվր հովելցնելու համար»^{**}

«Սոցա վիճակից ավելի քաղցր չէ այն մանր վաճառականների վիճակը, վոր նույնպես լքանելով յուր ընտանց յերկիրը ձեռք են գարկում վաճառականութեան պանդխտանալով ստար աշխարհում: Նոցա կյանքի պանդխտանալով ստար աշխարհում: Բ. յեր. 334—335:

^{*}) Մ. Նայրանդյանի յերկերը: Բ. յեր. 334—335:
^{**}) Նույնը, յեր. 340—341:

Համբիղի վրա եւս չկան ծայրիկներ և վարդեր, ամենայն քայլավորսի փո՛ւչ և տառա՛ւկ : . . . Նա բոլորովին մեքե- նայայտած մանուսմ և յուր կյանքի թելը, նորան չե վրդ- վում մի հրապուրիչ յույս, նա չե անհուսմ յուր ապա- գայի հորիզոնի վրա մի յերջանկության ասող. նորա ներկան ու ապագան խափար և : Նա ասնում և յուր կյանքի ծանր խաչը, մինչև վոր մի նյութեղեն խաչ անկվի նորա գերեզմանի վրա» :*)

«Ազգը, — ամփոփում և դառնությամբ հայ հրա- պարակախոսը, — . . . վորձեց մինչև այժմ վաճառակա- նությունը, նա փորձեց վարձկանությունը և մշակու- թյունը. սոցանից հետեցավ նորա կյանքի ավերանքը, վորի տակ այսօր ճնշվում և միջարեկ» :**)

Նալբանդյանն զգուշացնում է հայ ժողովրդին վարձկան մշակութայն կարիքայից ու վաճառակախու- քյան Ացիլլայից, վորոնք չառ ու չառ ընտանիքների մարեյու պատճառ են դարձել, վորով և մնասել են հա- սարակական շինվածքին : Հայ ժողովրդի փրկությունն, ինչպես և ուրիշներինը, հայ հրապարակախոսը տես- նում է դարձյալ հողի ու յերկրագործության մեջ : Հե- ոտ՛ւ քաղաքից, վերագա՛րձ գեպի գյուղ, — նորից հրն- յում է հայ Գրակոսի հրավերը :

X

«Մինչև ազգը . . . չկատարե մի տնտեսական հեղա- խոխություն մինչև այսօր բռնած յուր ընթացքի մեջ և մինչև չդիմե բնության գոգը, հառաջագիժությունը

*) Նույնը, յեր. 342 :

**) Նույնը, յեր. 343 :

աներեվակայելի յե : . . . Այն որից պիտի թվենք ազգա- յին բարենորոգության դարագլուխը, յերբ ազգը դիմե- ղեպի բնությունը, վոր վոչ միայն կարող է փրկել և ա- դատել ազգը ազքատությունից, այլ և մեծ գարկ տալ նորան հառաջագեժ ուղղության մեջ :*) . . . Հիմնական նորան հառաջագեժ ուղղության ուրիշ բան չե կարող լի- և խեղացի հնարը փրկության ուրիշ բան չե կարող լի- նել, յեթե վոչ դառնալ յուր նախկին կացությանը : Հո- զր և յերկրագործությունը կարող է նորան փրկել» :**)

Յուր նախկին կացությանը դառնալը, դեպի բնու- թյան գոգը դիմելն ու տնտեսական հեղափոխություն կատարելը հնարավոր չե առանց նյութական անհրա- ժեշտ պայմանի : Վորքան ել ազգը բարե կամք ունենա յերկրագործությամբ պարապելու, չե կարող, քանի վոր հող չունի : Ինչպես այլ, նույնպես և հայ ազգային շարժման նպատակը պետք է լինի հող ձեռք բերելը, վո- րովհետե՛վ՝

«Այն ազգը, վոր չունի հող ու յերկիր, յերբեք չհուսա, վոր պիտի հարստանա. այդ անբնական բան է և դորան հուսալը խելագարություն : Թող բնավ չհու- սա, վոր առաջ հարստանա և հետո յերկիր ձեռք բերե- սա, վոր առաջ հարստանա և հետո յերկիր ձեռք բերե- սա յլինելու չե : . . . ***) Վորեիցե աղքատ հաճարված ազգ, յեթե ունի մի կտոր հող, ապահովել է յուր կյանքը» :****)

Նալբանդյանի կենսագրությունից հայտնի յե, վոր

*) Նույնը, յեր. 355—356 :

**) Նույնը, յեր. 343 :

***) Նույնը, յեր. 320 :

****) Նույնը, յեր. 319 :

նա վոչ միայն գրով, այլ և սրով աշխատում էր մի կտոր հող ձեռք բերել յուր սեփական ազգի համար: Հայ հրապարակախոսի ու Սվամյանի նամակագրութունից զխոնք, վոր մի խումբ հայեր, վորոնց մեջ մտնում էին նաև հիշյալ յերկու գործիչները, մտածում էին Տաճկահայաստանում հեղափոխական կոմիտեներ հաստատել, արատահամանից զենք անցկացնել և ստարտոզի նշանավոր հեղափոխականների գործակցությունով ու Կիլիկիայի ավերն անդլիական գորք էջեցնելով հայ ժողովրդին ապստամբեցնել: «Յերկրագործությունը» ցույց և տալիս, թե ինչ հասարակական գաղափարները տեղ մարդիկ էին մասնակցում այս շարժմանը:

Մեզանում մինչև այժմ XIX դարի հայ հասարակական շարժումները, մասնավորապես տաճկահայի ապստաղության ձգտող հեղափոխական շարժումն, սուսն-ձին պատմական ուսումնասիրությունների նյութ չեն դարձել: Վերջին շարժման մասին յույս տեսած հոգվածներն ու աշխատությունների մեջ քննադատության են յենթարկված գլխավորապես քաղաքագիտական ու հեղափոխական տակտիկայի խնդիրները: Իսկ գլխավոր հարցերը—տաճկահայ հատարակական սարքեր խմբերի վիճակն ու հեղափոխական շարժման մասնակցելու չափը, նրանց զանազան նպատակներն ու սրանց ձևակերպումը գրականության մեջ—բոլորովին նկատի չեն առնված: Քննադատության հիշյալ մակերևութային ուղղության պատճառն անշուշտ սոցիոլոգիական այն սխալ հայացքն է, ըստ վորի ազգը մի անբաժանելի ամբողջ է, իսկ ազգային շարժումը՝ մի պարզ գործողություն, գուրկ որդանական բարդությունից:

Նալբանդյանի «Յերկրագործությունը» մի թանգազին փաստաթուղթ և հայ հեղափոխության պատմագրի համար, վորովհետև ցույց և տալիս, թե 60-ական քվականներին հեղափոխական շարժման մասնակցողների քվում կային մարդիկ, վորոնք միայն քաղաքական ազատություն ձեռք բերելու ձգտումով չէին տարված. այլ նպատակ ունեյին տնտեսության հիմնական հարցերը լուծել ու հայ գյուղացու վիճակն արմատապես տնորինել: Այնպիսիներին հետաքրքրում էր վոչ թե ազատ, անկախ Հայաստանն ըստ ինքյան, այլ այն յերանելի Հայոց աշխարհիկը, վորտեղ հողը պատկանում է ժողովրդին ու համայնացրած է. և վորտեղ հայ գյուղացին իրեն տնտեսապես ազատ է գգում: Նրանք գրել էին հատկյալ յերկրնորանքը. կամ հայ գյուղացու բարոյության համար նպատակավոր ազատ հայրենիք և կամ վոչինչ: Այլ տեսակ անկախությունը նրանց համար մի նոր բունակալություն էր:

«Ազատությունը ըստ ինքյան լիկ խոսք և և իրողապես չե կարող մարմնանալ առանց տնտեսական խնդրի լուծվելուն: Վոչ մի ազատ կառավարություն, վոչ մի ազատ որենդություն չե կարող փրկել մարդուն ստրկությունից, մինչև վոր այդ մարզը հողի վերաստրկությունից, մինչև վոր այդ մարզը հողի վերաստրկությունից չի ստատվանլի:» ... Այսոր, յեթե մի ժողովուրդ ստրուկ է, յեթե նա հող չունի և յեթե հաջողը նրան հող ձեռք բերել, իրավունքը և ժամանակը պահանջում են տնորինել այնպես, ինչպես ցույց և տալիս են երկու հարկը, ինչպես ցույց և տալիս բանականությունը և վոչ այնպես, ինչպես հին որերից մնացած, ա-

*) Նույնը, յեր. 329—330:

վանդական կառավարութիւնը անորինել են մինչև այժմ, այսինքն տերութեան կամ ազնվականութեան սեպհականն լով հողը և հասարակ ժողովուրդը զրկելով իրավունքից: Վերջին դիպվածում ազգութիւնը ազատութիւն չէ ժողովուրդին, նա փոխում է միայն նորա լուծը, մենք դրականապես թշնամի յենք այդպիսի ազգութեան, ինչպես թշնամի յենք բռնակալութեան, ուր կամ ինչ կերպով վոր հայտնով: Գիտենք, կան մարդիկ, և մեր իսկ սիրելի բարեկամներն մեջ, վոր պիտի ասեն. թող միանգամ ձեռք բերվի հողը, թող ինչպես կամի լինի կառավարութիւնը և անորենութիւնը, հետս կողողվի, կնորոգվի և այլն, և այլն: Չե, այս տղաշուքութիւն է. այս տեսակ ուղղադարձութիւնը և վերանորոգութիւնը հեշտ բաներ չեն և, համարձակ կարելի չէ ասել, նոր է նորո ձեռք բերելուց ալելի դժվար: Ուրիշներն վորձերից, վոր փորձողներին արժում են արշան ծովեր և վոր բոլորովին ձրի ներկայանում են մեկ իբրև որինակ, հարկ է, վոր խրատվենք և չերթանք այն ծուռ ճանապարհը, վորից և գնացողը կամի հետ դառնալ, բայց վտար սայթաքում է»:^{*})

Հայ գյուղացու սրատես իդեոլոգը գիտակցում է, վոր առանց հողի համայնացման ազատ հայրենիքը յերկրագործի համար կդառնա խորթ ծնող, վոր յուր ստիկները խլում է սովյալ գավալի բերանից: Նրա յերազածը շինականի մայր Հայաստանն է, վոր «յուր սուրբ ծոցն սևուկ է պարգեվում լիառատ»:^{**})

^{*}) Նույնը, յեր 374—375:

^{**}) Գյուղացու իդեոլոգի նույնպիսի սրահայաց բացառիկ հոռետեսութիւնն ազագա ազատ Հայաստանի

Սրանք Նալբանդյանի maximum ծրագրի կետերն են, վորոնցով հայ հրատարակատուն ապահովում է հայ ժողովուրդի հեռավոր ազգան: Բայց նա ունի նաև մի ուրիշ ծրագիր, վորը պետք է գործադրվի մտտիկ ապագայում: Նալբանդյանը կարծում է, վոր մտա է այն ժամանակը, յերբ պիտի հասանե թյուրքիս գրամական կյանքի վախճանը (յեր. 343):

վերաբերմամբ դանում ենք նաև Ա. Թոխմատյանի քիչ առաջ հիշած գրքուշիւում: «Յերբ մի ազգային մարմին ձգտում է ինքնագոյութեան, ամենից առաջ նա լրջորեն ուշադրութեան պետք է դարձնե, թե յուր ներքին կենսական ուժերն միավորութեան կապը ինչ պայմաններն մեջ են դանվում: Առանց այդ միութեան անբակտելի և սերտ համերաշխութեան շատ վտանգավոր է մտնել մի անսովոր ծանրութեան տակ, վորին վուջ մի իթած, անհամերաշխութեանից քայքայված կամ կեղծ համերաշխութեամբ միացած հիմքերը չեն կարող դիմանալ և պատճառ կզատանան ալելի անողորմ վերակործանման: Այդ կենսական ներքին ուժերից նշանավորը անտեսական հարցն է: Դա կենսական շրջանառութեան հարաբերական կայն է մի հանրութեան մեջ գտնված ամեն ատիճանի դասակարգութեան համար: Չկա մի դասակարգ, վոր 61-յերբարդ հողվածի իրագործմանը չցանկանար, բայց ամեն մի դասակարգը յուր ցանկալիքի բոլորովին տարբեր տեսակետովն է նայում դորս քան բոլորովին տարբեր տեսակետովն է նայում դորս վրա: Ինտելլիգենցիան ու Տաճկաստանի Էֆենդիներն յերես առած խմբերը նայում են նորա վերա, վորպես մի միջոցի վրա, վոր նրանց կմաստակարարե իշխանական ազդեցութիւն, կառավարչական բարձր պաշտոններ. դրա համար լինի թերևս, վոր այդ խմբերից մի քանիսը ձգտում են ազնվութեան... վաճառական, կալվածատեր, չարչի քաղաքացիները յերազում են յուր-

«Մի գեղեցիկ առավոտ թե Պոլսի և թե դավառների մեջ մարդիկ չախտի կարողանան հաց ճարել, աղքատությունը և սովը պիտի հարկադրեն նրանց դեպի հափըռտակություն և կողոպուտ, մի խոսքով՝ բարեկրոնյանց լայնածավալ սպերացիայի վերա, մի այնպիսի դործ, վորին միշտ կղաճնակցի ազնվական ազգակիցների տիրապետական ույժը և զրա համար Տաճկահայաստանում արդեն գնվել են և գնվում են լայնատարած դյուղեր, հողեր: Այժմ համարյա թե մեծ մասամբ հողատերերը քաղաքացիներն են, դյուղացիները համարյա վոչինչ չունեն: Գյուղացու ակնկալությունը բոլորովին աարբեր է: Նա սպասում է այն վիճակին, վոր յերբեք չե վախելի և վոչ յուր նախնիքը պատմական կյանքումը: Նա սպասում է թշվառության արատուները սրբելու, կյանքի անդորության, ազատ շունչ քաշել, աներկեան սրբը, ապահովություն յուր կյանքին, յուր ստացվածքին և յուր դործին: Նա ցանկանում է միայն, վոր նա կարողանա լծել յուր առատություն պարզևոզ գութանը, մշակել դարերով խոսքան մնացած յերկիրը և ընդանկան ցնծությամբ հնձել աշխատասեր ձեռների պտուղը: Կարողություն սենենայ պատրաստ պահելու յուր հյուրասեր սեղանը բոլոր անցավորների համար, նոցա հեա գվարթ սրտով բաժանել արդար վաստակի արդյունքը: Յերջանիկ լինել ընտանիքով, յերջանիկ լինել դրացիներով և բոլոր դյուղացիներով: Մի շատ հավեստ և աշխարհաշեն ցանկություն, վորին չեն հասել բունակալների տիրապետության այստեղ, չեն ել հասնիլ ինքնագոյության ժամանակին: Յեթե այսպիսի սարբեր հակադրական մտքերով և գգացմունքներով կարելի լինի հասնել մի նպատակի, վորի համար զերբնական կամ գերազգային ույժ է հարկավոր, այն ժամանակ նշմարիտ է, վոր գյուղացու վզից կը վերառնեն նորա քրտինքով տոգորված, ունդոգ, կեղտոտ յուժը. Աբա

խառնակություն:*) ... Ազգը պետք է մտածե յուր սպողան և ազատե յուր անձը սարսափելի նեղությունից ու աղքատությանից, վոր յեթե վոչ այսօր, վաղը պիտի թագավորե բոլոր Թյուրքիս մեջ՝ շնայելով այն սարսքին, վոր առնում է նա Անգլիայից»...**)

Հենց այս վառագից սրաշտպանվելու համար է հայ հրապարակախոսը հորդորում, շտապեցնում, վոր հայերը դիմեն դեպի բնության դողը, դեպի հայրենիք, դեպի պարզեվասու հողը: Յերկրագործությունը մի փրկարար շանքարգել է նաև այն սակալի կայծակների հանդեպ, վորոնք պիտի փայլատակեն սևակացած թյուրքիայի գլխին:

«Այն ժողովուրդը, վոր դուրս չի յեկել յուր պատմական աշխարհից, թող և չարթի. մեկը բնդդեմ ենք տեղը կդնեն նորը. փառքերով գաղաբառն, բայց ավելի ծակը, սեպիակակը, վորի քրտինքը միշտ պետք է լվանալ արյունով: Նորան կասեն. «Այդ նոր լուծը քեի ծակը է, բայց քո սեպիակակն է, քաշիք, հոգիդ դուրս գա»: Այն ժամանակ գյուղացին կզգա, վոր քեի քրդեր ու արտաքին հարստահարողներ այլ ևս չկան, բայց յուր վիճակը ավելի և ավելի ծակրացել է. ներկան անցյալից ավելի վատ: Այդ ծանրության տակը նա ընկճվում է՝ կործանելով յուր վրա հաստատված շինությունը, որորվելով նորա տակը: Ազգության գոյությունը, որորվելով նորա տակը, առարկայի համար չէ, թյունը ազգային սնտիառության առարկայի համար է, իսկ ազալ ազգային բարեկենդանության հիմքը դյուղացու բարեկենդանության հիմքը: Ա. Թոթմախյան. «Մասիս լեռների կենդանությունն է»: Ա. Թոթմախյան. «Մասիս լեռների հարավային ստորոտներ», Բ. մաս, յեր. 23—26:

*) Մ. Նալբանդյանի յերկերը, Բ. 336—337:

**) Նույնը, յեր. 377:

դադթականութեան և դադթականութեան չէ մեր քարոզածը. իսկ այն մասը, վոր դուրս և յուր աշխարհից, առեկ և թե գտնվում է դադթականութեան և պանդխտութեան մեջ, նորան հրավիրում ենք վերադառնալ, մանավանդ Փոքր Ասիա, վոր ավելի հրապուրիչ է յուր ծովեզերյա դրութեամբ: Հերիք է, վոր մի յերկու դըլխավոր և հարմարավոր տեղերում սկսանի յերկրագործութեանը, մյուս մասերում, վոր թերեմա հեռի յեն ծովից, նույնպես կգարթի: . . . Ո՞վ արդեւաթ է հայոց ժողովրդին, վոր նա չընակի վերասաց տեղերում . . . Յեզ վո՞քը դործ կարելի յէ տեսնել մի հողի վերա, ուր աճում է և բազմանում է ամենայն ընտանի անասուն և գրաստ, ուր բուսանում է բամբակ, ցորյան, բրինձ, վարսակ, դարի, տորոն, սուսամ, չաքարեղեգն, ճակընդեղ և այլ հազար բուսական և ընդեղեն . . . Այս անվանված բերքերից զեթ յերկուքը կամ յերեքը բավական են հարստացնել մի բազմութեան, վոր արիաջան փութով պարապում էր այն նվիրական գործով:»*)

Ահա այս էլ Նալբանդյանի *minimum* ծրագիրն է, վոր հայ ժողովրդին փրկելու յէ չարից մինչև այն հեռավոր որհնյալ ժամանակը, յերբ ըստ Խրիստոսի՝

- Կանցնի ձմեռ, կուշա գարուն,
- Մեռելոց գաշտ ծաղկազարդի,
- Անջատ անջատ վոսկերստիք
- Շարժին հրաշյուք, կցին իրար,
- Շունչ մի չնչէ կենդանարար,
- Հառնի, կանգնե մեռելոց գաշտ . . .
- Մինչ վերածնին հայոց վորդիք

*) Նույնը, յեր. 344:

Յեզ Հայաստան հառնե փառսք . . .
 Յեզ Յեսային հնչե պառզամ .
 Այսպես ասե Տեր գորութեանց .
 Այլ ևս հաշտյալ եմ յես ընդ քեզ,
 Ո՞վ տառապյալդ Հայաստան:*)

XI

Այժմ անցնում ենք Նալբանդյանի աշխարհայացքի ուսումնասիրութեան մի կետին, վոր մինչև այժմ ակնարկով անգամ շոշափված չէ յեղել, չնայած վոր առանց այս կետի լուսարանութեան վոչ մի ուսումնասիր իրապունք չունի վերջնական յեզրակացութեաններ հանելու հաջ հրապարակախօսի սոցիալական զավանանքի դասակարգային գույնի մասին: «Յերկրագործութեանը վորպես ուղիղ ճանապարհ» գրքում կա մի փոքրիկ շլուծված հանգույց, վորն առանց ուշադրութեան թողնել անցնելը, ճիշտ է, թեթեւութեան և ուսումնասերի համար, վորովհետեւ այս դեպքում վերջինս ազատվում է այն լուծելու տքնութեանից, բայց և միաժամանակ յերկշտ, անպատվարեք ու թողարկված փախուստ է, վոր վկայում է, թե բազմավեպ հետախույզը չէ սժտրված հանգուցակոտոր սրով:

Մինչև հիմա Նալբանդյանի աշխարհայացքի մեջ մենք գեռ չենք նկատել այնպիսի մտքեր, վորոնք տարբեր լինեյին նրա նախկին ասածներից և առաջին հայացքից յերեվացնեյին, թե հայ հրապարակախօսի քաղաքյալունեյի մեջ կա մի հակասութեան, վոր պետք

*) Խրիստոսի Հայրիկ «Վերջալուսի ձայներ», Գասերե, 1901. յեր. 12-13:

ե պարզել : Մինչև հիմա «Յերկրագործությունից» քա-
ղած բազմաթիվ հատվածներն ու այս առթիվ արած
գիտողությունները ցույց տվին, Վոր հեղինակը ջասա-
ղով է բացառապես մանր յերկրագործության, պաշտ-
պան դյուղացիության շահերի, դեմ է կապիտալիզմին
և ժխտում է բանվորությունը, վարձկան մշակությունն
ու վաճառականությունը : Սակայն նույն այն հեղինա-
կության մեջ, վարի վերնագիրն է «Յերկրագործություն-
նը վորպես ուղիղ նամապարհ» և վարը մանր յերկրա-
գործության ու գյուղացիության ի խորոց սրտի փա-
ռաբանություն է, գտնում եմք նաև այնպիսի հատված-
ներ, վորոնք ըստ յերեվույթիմ-միանգամայն հակասում
են նրա՝ մինչև այժմ ասածներին :

«Վաճառականությունը և արվեստը,—գրում է
նույն գրքում Նալբանդյանը,—անհրաժեշտ է և մեծա-
պես պատճառ ազգի հարստության, բարսության ու
յերջանկության»...*)

«Մի քանի տարի կա, վոր լսում ենք հանապազ մեր
վաճառականներից մի կարծիք, թե հարկաւոր է աշխա-
տել վաճառականության վերա, վորպեսզի ազգը հարս-
տանա : Յերանի թե, ասում ենք մենք. քանզի այն տե-
սակ վաճառականության մեջ չենք տեսնում ազգային
հարստության հիմքը :... Այն ժամանակ ազգային է
վաճառականությունը, յերբ նուրա խաբիսիւր գրված է
ազգի հիմքի վերա» :**)

*) Մ. Նալբանդյանի յերկերը, Բ. յեր. 320 :
Արվեստ տակը Նալբանդյանը հասկանում է ընդհան-
րապես հում նյութի մշակությամբ պարասպոյ արտա-
գրություն :

***) Նույնը, յեր. 345—346 :

«Մինչև այժմ հայոց ազգի մեջ խախուտ և անհիմն
վաճառականության խորհրդով հիմնվեցան մեծ կամ
փոքր ընկերություններ, նորանցից վոմանք ընկան
գեղքերի հարվածի տակ, վոմանք տեղում են կիսա-
մեռ, բայց մինչև այժմ չերեկեցավ մի ընկերություն աղ-
յալին վաճառականության» :*)

«Յեւ միայն հում բերքերը չեն, վոր կարող են
դրավել հայ վաճառականի գործունեությունը. այդ
բերքերի մշակությունը մի լա՛յն հանդես, մի բնակա՛ն
ասպարեզ այն ժրջանն ու գործունեյա մարդերի համար,
վոր ստուգապես կամին պարապել վաճառականության :
Նույն այն գործարանքը, նույն այն մեքենաները, վոր
կարող են ներգործել Յեւրոպայի մեջ ծանր պայմաննե-
րի տակ, կարող են ներգործել և Ասիա մեջ, ուր կյանքի
պիտույքը, պարզությունը և այլ բնական հանգամանք
ները ավելի դյուրություն կարող են տալ այսպիսի ձեռ-
նարկության» :**)

Այս ու շատ ուրիշ պարբերություններ կապած չեն
թողնում, վոր նույն Նալբանդյանը կողմնակից է նաև
վաճառականության. վորը նրա ասելով՝ պետք է լինի
ազգային. և մինչև անգամ խրախուսում է գործարանա-
յին արդյունաբերությունը : Ահա՛ հանգույցը, վոր չե
լուծված, ասկայն վորը պետք է լուծել և կամ այլ և.
յերբեք բերան բաց չանել Նալբանդյանի մասին խոսելու
համար :

Հայ հրատարակատեսի յերկամ պարունակված այս

*) Նույնը, յեր. 349—350 :

***) Նույնը, յեր. 357 :

հակասութեան վրայից թուել են «Յերկրագործութեան» մինչև այժմ ուսումնասիրողները: Սրանցից վոմանք ուշադրութեամբ դարձնելով այն մտքերի վրա միայն, վորոնք վերաբերում են յերկրագործութեանն ու հողի համայնացմանը, և անտես առնելով վաճառակա-նութեան ու արդյունաբերութեան զարգացման նվիրված եջերը, յեկել են այն յեղբակացութեան, վոր նախադ-րանք գյուղացիութեան իդեոլոգ ե ու թշնամի բուրժուա-զիայի: Մյուսներն, ընդհակառակը, մոռացութեան մատնելով այն եջերը, վորոնք նվիրված են յերկրագոր-ծութեանն ու հողի համայնացմանը, և նկատի ունենա-լով միայն այն մտքերը, վորոնք վերաբերում են վաճա-ռականութեանն ու արդյունաբերութեան զարգացմանը, «Յերկրագործութեան» հեղինակին անվանում են «յեր-րորդ դասի» կամ բուրժուազիայի իդեոլոգ ու մանր արտադրողների թշնամի:

Հակասակորդ կողմերից յուրաքանչյուրն ուշա-դրութեան առած եջերից ճիշտ յեղբակացութեան ե հա-նում: Հիրավի, յեթե նկատի ունենանք միայն այն եջե-րը, վորտեղ հեղինակը ջատագովում է մանր յերկրա-գործութեանն ու ժխտում կեսպիտալիզմը, ապա նախ-րանդյանին միայն գյուղացիութեան իդեոլոգ կարելի յե անվանել: Իսկ յեթե նկատի ունենանք միայն այն եջերը, վորոնք նվիրված են հայ վաճառականութեանն ու ար-դյունաբերութեան զարգացման՝ անկախ այն սոսճա-նափակումներից, վոր գնում է հեղինակն, այն ժամա-նակ հայ հրապարակախոսի աշխարհայացքին չե կարելի այլ անուն տալ, քան բուրժուազիայի իդեոլոգիա:

Սակայն յերկու բանակներն ել իրենց յեղբակացու-

թյունների համար բավարար հիմքեր չունեն: Առաջիննե-րին—նախադյանին գյուղացիութեան իդեոլոգ անվա-նողներին ի պատասխան վերջինները—հայ հրապարա-կախոսին բուրժուազիայի իդեոլոգ անվանողներն ու կամ ընթերցողները կարող են ցույց տալ վաճառակա-նութեան ե արդյունաբերութեան զարգացմանը նվիրված եջերը: Յեվ ընդհակառակը, վերջինների ասածները հերքելու համար առաջիններն ու կամ դարձյալ ընթեր-ցողները կարող են մատնանիչ լինել այն մտքերի վրա, վորոնք մանր յերկրագործութեանն ու գյուղացիութեան ջատագովութեան են հանդիսանում:

Վո՞րտեղ ե յեւրը: Մե՞թե նախադյանը Յանուսի պես յերկու յերես ուներ, վորոնցից մեկով ժպտում եր մանր գյուղացիութեանն, իսկ մյուսով՝ բուրժուազիա-յին: Մե՞թե նա մի անհմուտ կառավար եր, վոր հասա-րակական սայլի յերկու ծայրերին հակաձիգ դրասաներ լծելով մտածում եր անվտանգ ընթանալ պատմական ուղիով: Յեվ կամ մե՞թե մեր մեծ հրապարակախոսն այնքան թուլամիտ մարդ եր, վոր չեր կարողանում նկատել յուր միևնույն գրվածքի մեջ կողք կողքի դեր-ված խոսքերի ազդակող հակասութեանը: Յեթե վոչ, ապա ի՞նչպես պե՞տք է հաշտեցնել այս հակասութեանը, հաշտեցնել վոչ բռնազրոսիկ, մտացածին ու անհիմն բա-ցատրութեաններով, այլ հիմնավոր, իրական ու ճշմա-րիտ ապացույցներով:

Das Wahre ist das Ganze! *)

*) «Ամբողջութեան մեջ ե ճշմարտութեանը» (Հե-գել):

Այս հակասութիւնը լուծելը շատ հեշտ է, յի՞թե միայն նկատի ունենանք նրա գրգռածքի ամբողջութիւնը և վոչ թէ հետեւի ենք գովարութիւնների վրայից վտանները, նեղ գոնեքից խոստովելու անգործ խորամանկութեան:

Մեր խորին համոզումով նայրանդյանի աշխարհայացքի մեջ թաղալորում է միայն մեկ դատակարարի փոքի. հայ հրապարակախոսը գլխաղացիւթյան իղեղուց է հանդիսանում նույն իսկ այն ժամանակ, յերբ խոսում է վաճառականութեան ու արդյունաբերութեան գարգացման մասն մագլին:

Մտանանք այս հանգույցին և տեսնենք, թէ ինչպէս մեկը կարող է խոսել վաճառականութեան ու արդյունաբերութեան գարգացման սպտին և միևնույն ժամանակ մնալ գյուղացիութեան պաշտպան:

XII

Անկարող լինելով ինդիվիդուալիստական աշխարհայացքի սահմաններից դուրս գալու և յերեմիակայելու մի հասարակարգ, վորտեղ գոյութեան ունի բարիքների բնկերական բաշխումն միայն, և միևնույն ժամանակ չիմանալով, թէ վորպիսի աղետարեր ազդեցութեան ունի ապրանքային տնտեսութեանը մանր արտադրութեան վրա, նայրանդյանը յուր քարոզած իղեղական կարգերում տեղ է տալիս փոխանակութեանն ու սրտ պաշտոնյա վաճառականներին: Վաճառականների գործ է համարում վոչ միայն պարզ առք ու վաճառքն, այլ և հում նյութերի մշակութեանը: Հայ հրապարակախոսն ընդունում է վաճառականութեան (առուտուրի ու հում

նյութի մշակութեան) կարևորութեանը, սակայն մի մեծ սահմանափակումով. այն է, վոր այս գործով պարապողները կազմեն ընդհանրութեան մեջ փոքրամասնութեանը, կազմեն ընդհանրութեանը, կարևորութեանը, վտանգ է սպառնում: Թե ընդհանրութեան հետ համեմատած ինչ մեծութեան պետք է ունենա փոքրամասնութեանը, վորքան մարդիկ պետք է պարտապէս վաճառականութեանով և կամ ուլ պետք է վորտեղ, թէ վորտեղ են պարապելու յերկրագործութեանով և վորտեղ առուտուրով ու հում նյութի մշակութեանով, և վորպիսի հասարակութեան մեջ մեծամասնութեանն ու փոքրամասնութեանն այս հարաբերութեանը պահպանվի անխախտ, — նայրանդյանը չէ ասում, բայց յուր քարոզած կարգերի համար անհրաժեշտ պայման է դնում յերկրագործ մեծամասնութեան և առեկտրական ու հում նյութ մշակող փոքրամասնութեան գոյութեանը:

«Յերբ վոր մի ազգ կազմող անհասանելի մեծագույն մասը պարապի յերկրագործութեամբ և առհասարակ գյուղական տնտեսութեամբ, այն ժամանակ այլ ազգի ընդհանրութեանը հարուստ է և ապահովյալ, վորովհետեւ նորա հիմքը դրված է բնականապէս և բնութեան հետեւ նորա պատճառով փոքրագույն մասը, վոր վերա: Յեւ այս պատճառով փոքրագույն մասը, վոր չէ պարապում յերկրագործութեամբ, կարող է հալածալու լինել, վոր հազիվ պիտի կարողանա մշակել, չինել, առ լինել, վոր հազիվ պիտի կարողանա մշակել, չինել, գործել և վաճառել այն, ինչ վոր դուրս է բերում յեանից նորա մեծագույն մասը: Ազգի մեծագույն մասը կեանից նորա մեծագույն մասը ապահովյալ է և անհար է, թէ յերկրագործութեամբ ապահովյալ և անհար է, թէ նեղութեան պատահի կազմից: Փոքրագույն մասը, վոր բաղկանում է վաճառականներից, չէ կարող

մարում աչնպիսի կարգեր, յերբ արիստոսիրատիան ա-
ռանց աշխատելու վայելում է աշխատող դասակարգերի
հավելյալ արդյունքը :

Ճիշտ նույնպես էլ Նալբանդյանը չէ դառնում վա-
նառականների ու արդյունաբերողների իդեոլոգ լուկայնի
պատմաառով, վոր նա սրանց գոյության իրավունքն ըն-
դունում է : Վերլուծությունը պետք է շարունակել ու
տեսնել, թե արդյոք վո՞ր հասարակական խմբի շահերն
են նրա համար գերակա և վորինն՝ ո՞ժանդակ ու ստորա-
դաս. այն ժամանակ միայն վերջնականապես լուծված
կլինի Նալբանդյանի՝ գաղափարապես վո՞ր դասակար-
գին պատկանելու հարցը :

«Յերկրագործության», ուշադիր վերլուծությունը
յուրյ է տալիս, վոր հայ հրապարակախոսի համար վա-
նառականության շահերն ինքն ըստ ինքյան նշանակու-
թյուն չունեն. նա սրանց վրա նայում է մեծամասնու-
թյան, յերկրագործ մասսայի շահերի տեսակետից :

Վաճառականի գործունեությունը կարող է յերկրա-
գործի համար չեզոք լինել, այսինքն անողուտ ու ան-
վնաս : Յերբ մի հայ վաճառական Զինաստանից թեյ առ-
նելով տանում, վաճառում է Ֆրանսիային, նրա արածը
հայ գյուղացու համար վոչ ոգտակար է և վոչ վնասա-
կար : Կարող է վաճառականի գործունեությունը հայ
գյուղացու համար վոչ թե չեզոք, այլ վնասակար լի-
նել : Որինակ՝ յերբ հայ վաճառականը Ռուսիայից ալ-
յուր է ներմուծում Կովկաս և այսպիսով մրցելով ցորեն
ձախող հայ գյուղացու հետ՝ իջեցնում է սրա սպրանքի
գինը և կամ անվաճառ թողնում սրա ցորենը, — նրա
գործունեությունն անշուշտ վնասակար է հայ գյուղա-

ցու համար : Մեր հիշած յերկու դեպքում էլ թեև գյու-
ղացին հաստատապես վոչ մի ոգուտ չի ստանում, բայց
վաճառականը կարող է ոգավել : Յեթե անհատների փո-
խարեն վերցնենք դասակարգեր, կարող յենք ասել, վոր
տուեորական դասի գործունեությունը յուր համար կա-
րող է ոգտակար լինել նաև այն դեպքում, յերբ նույն
գործունեությունից վոչ մի ոգուտ չէ ստանում հայ
գյուղացու թյունը և կամ նույն իսկ վնասվում է :

Նալբանդյանը բացարձակապես մերժում է այն-
պիսի վաճառականությունը, վոր կարող է ոգուտ բե-
րել վաճառականին. ուրեմն և վաճառական դասին.
բայց ոգուտ չի բերիլ և կամ վնաս կբերե ազգին. այսինքն
ժողովրդին կամ յերկրագործ մասսային :

«Թող հայ վաճառականը հազար տարի՝ ապրանք
բերե Յեվրոպայից ու վաճառե, կամ, վոր նույն է, ու-
տարի ապրանքը ուղարկե Յեվրոպա, ազգին վոչ շահ կա
և վոչ վնաս, վորպես նաև վոչ ազգային վաճառականու-
թյուն. վաճառականը թերես ինքը շահվե, գործըստ
ազգին բան չկա^{*)} :

«Այս տեսակ վաճառականությամբ թերես, յեթե
հայը միջնորդ լիներ յերկու համարող աշխարհների
միջեվ, դուրս կարողանար սպառով յեղանակով սպ-
րել, թեյեվ միմիայն յուր համար, ասանց ազգի բնո-
հանրության ոգուտ բերելու» :^{**)}

«Թող հազարավոր դառնա հարուստ անհատների

*) Նույնը, յեր. 346 :

**) Նույնը, յեր. 355 :

թիւլը... ի վերա այսր ամենայնի ազգի ընդհանրությունը կմնա անշարժ և անդամալուծյալ»։*)

Անկասկած է, վոր հայ հրապարակախոսի հոգսը վոչ թէ վաճառական դասի բարորությունն է, այլ ժողովրդինը։

«Մինչեւ այժմ, — գանգատվում է Նալբանդյանը, — հայոց ազգի մեջ խախուտ և անհիմն վաճառականության խորհրդով հիմնվեցան մեծ կամ փոքր ընկերություններ. նորանցից վոմանք ընկան գեւրքերի հարվածի տակ, վոմանք տեւում են կիսամեւ, բայց մինչև այժմ չերեվեցաւ և վոչ մի ընկերություն, վոր պարապեր յերկրագործության և յերկրագործական բերքերի մշակության, մինչև այժմ չերեվեցաւ մի ընկերություն ազգային վաճառականության»։**)

Ի՞նչ է հասկանում «Յերկրագործության» հեղինակն ազգային վաճառականություն ստելով։

«Յեւ մի՞ թէ կարծում են մեր պատվելի վաճառականք, թէ Մենչեսարի, Մարսելի կամ այլ յեվրոպական քաղաքների հետ առուտուր ունենալը կարելի չէ անվանել ազգային վաճառականություն միայն այն պատճառով, վոր ինքյանք հայ էլին։ Նոցա վաճառականությունը ազգային չէ յեւ ազգի ընդհանուրի շահի հետ չունե վորեվիցե վերաբերություն։ Այն ժամանակ միայն կարող է յերել ազգային վաճառականություն, յերբ նա զլիսավորապես հայի առաջ բերած նյութը կամ արդյունքը վաճառե. այն ժամանակ

*) Նույնը, յեր. 356։

***) Նույնը, յեր. 345—350։

այն ազգը ոգուս կբաղե մեր վաճառականների ործունէությունից, յերբ սորա միջնորդ լինին հայոց ընդհանրության և Յեւրոպիո մեջ. այն ժամանակ ազգային է վաճառականությունը, յերբ նորա խախուրդը գրված է ազգի հիմքի վերա»։*)

Այն վաճառականությունը, վոր չի հիմնվում յերկրագործության վրա, վոր չի վաճառում յերկրագործական արդյունքներ, վոր չի նպաստում գյուղացու արարությանն, ազգային վաճառականություն չէ և ազգի շահի հետ վոչ մի վերաբերություն չունի։ Ընդհանրապէս, ազգային վաճառականությունը, վոր յերկրագործության վերա է հիմնվում. ոգոսկար է գովելի։

«Հայոց ազգը քանի վոր չունի սեպհական յերկրագործություն բոլոր նրա ճյուղերով, նորա վաճառականությունը կլինի Յեւրոպացոց համար ծառայություն։ Իսկ այն որից, յերբ ազգը կսկսի մշակել հողը, յերբ մարդիկ կդառնան յուրանց հայրենիք, բարեկեցութեան յերկրները, վոր այսոր գրեթէ ամայի և խոպան էր, այն որից կկենդանանա և հայոց վաճառականությունը։ Յեւ այն որի վաճառականը... յեւ ինքը կը շահվի տանապատիկ ավելի և մեծ ու մեծ շահ կը բերե ազգի ընդհանրության, վոր է ազգի հիմքը, յմակր, կարծարանք»։**)

«Առանց յերկրագործության չկա վաճառականություն, և առանց ազատ հողի չկա յերկրագործություն»։ — ասում է մի տեղ Նալբանդյանը «Յերկրագործության» մեջ։ Այժմ մեզ համար հասկանալի չէ

*) Նույնը, յեր. 345—346։

***) Նույնը, յեր. 357

այս խոսքերի իմաստը: Հայ հրապարակախոսն ուզում է տեսլ, թե առանց ազատ հոգի, առանց համայնացրած հոգի չկա աշխատավորի յերկրագործություն իսկ առանց աշխատավորի յերկրագործություն չկա «ազգային» վաճառականություն: Ակամա մարդ միտն է գալիս միջնադարյան աստղվածք, թե փրկվում ստիպությունն աստվածաբանության աղախինն է նալբանդյանի ֆարգած վանառախանությունը յերկրագործության գեղմատարած աղախինն է, իսկ ուսելտրական դասը՝ գյուղացի դասակարգի հյուսալորը:

XIII

Ինչպես նախորդ գլխում մեջ բերած հասկանքները այս ցես են տալիս, նալբանդյանը վաճառական ասելով հասկանում է թե առևտրականին ու թե արդյունաբերողին: Ուրեմն յերբ հայ հրապարակախոսը քարոզում է ազգային վաճառականություն, խոսքը չէ վերաբերում միայն առևտուրին, այլ և արդյունաբերությանը: Առևտուրն ազգային է այն ժամանակ, յերբ վաճառականը գնում ու վաճառում է հայ գյուղացու ապրանքն, իսկ արդյունաբերությունն ազգային է այն ժամանակ, յերբ մշակում, ձեռագործում ու մեքենագործում է դարձյալ նույն հայ գյուղացու արտադրած արդյունքները: Սխալ կլինի կարծել, թե յերբ նալբանդյանն յուր սխալ տեսի մեջ տեղ է տալիս հուսմ հյուսի գարծարանային մշակման, այլա ևս ֆարգում է կապիտալիզմ: Յերկրագործության» հեղինակի ասածն այսպես բմբռնել

հանակում է ամենեին գաղափար չունենալ վոչ միայն կապիտալիզմի, այլ և ընդհանրապես հասարակական կազմակերպությունների էություն մասին:

Ինչո՞վ են տարբերվում հասարակական կազմակերպություններն իրարուց: Ի՞նչ զանազանություն կա, որինակ, կապիտալիզմի ու սոցիալիզմի միջև: Յեթե ասենք, վոչ արտադրության միջոցներն են հիշյալ հասարակություններին այս կամ այն կազմակերպության կերպարանքը տալիս, ճիշտ չէ լինել, վոչ լուծակերպության կերպարանքը միջոցները, գործարարական արտադրության նույն միջոցները, գործարարական և մեքենա էին, գոյություն ունեն թե կապիտալիստական ու թե՛ սոցիալիստական հասարակությունների մեջ. իսկ տարրական արամաբանությունից հասկանալով ընդհանուր հասկանությունը տարբերել հասկանալով ընդհանուր հասկանությունը տարբերել հասկանություն լինել չէ կարող: Ուրեմն վո՞րն է բամբռան այն միջոցները, վոչ զատում ենք հասարակությունները հիմունքը, վոչ զատում ենք ասիական, անտիկ, Ֆեոդալ միջոցներից և անվանում ասիական, անտիկ, Ֆեոդալական, կապիտալիստական ու սոցիալիստական: Այս հարցի միակ ճշմարիտ պատասխանը հետևյալն է. վոչ թե արտադրության մեջ ունեցած տարբեր հարաբերությունն է, վոչ ևս արտադրական կազմակերպությանը վոչ լուծակերպարանք է տալիս: Կապիտալիզմը վոչ այլ ինչ լուծակերպարանք է հարաբերություն արտադրության, յեթե վոչ մարդկանց հարաբերություն արտադրության մեջ: Ի՞նչ է սոցիալիզմը, յեթե վոչ նույնպիսի հարաբերություն: Թեև հիշյալ յերկու հասարակության արտադրության միջոցները նույնն են, միայն յարտադրության միջոցները, այնուամենայնիվ

թյուն ունի պրոլետարիատ, և կամ սոցիալիստական հասարակութեան մեջ, վորտեղ արտադրութեանը հանրայնացած է, և բոլոր քաղաքացիներն ընկերներ են կրկնում ենք, նախանդամն այս կետում սխալվում է բայց չէ դավաճանում յուր գասակարգի, գյուղացիութեան շահերին: Հայ հրապարակախոսը յուր քարոզած կարգերի մեջ մտցնում է սրանց համար խորք տարբայց և այնպես չէ դառնում բուրժուազիայի իդոլոգ: Յերկու որինակով պարզենք այս պարագոքը:

Թոմաս Մորն «Ուտոպիայի» մեջ նկարում է մի սոցիալիստական հասարակութեան. այստեղ բոլորն աշխատում են, չկան պորտաբուժներ ու աքնողներ, մարդիկ չեն բաժանված գասակարգերի: Բայց նույն Թոմաս Մորը միևնույն դրվածքում պատմում է, թե այն իդեալական կղզում կային ստրուկներ, վորոնք կատարում էին կեղտոտ, զզվելի աշխատանքները: Այժմ հարց է առաջ գալիս. վո՞ր մարդկանց շարքին է պատկանում «Ուտոպիայի» հեղինակը. նրա՞նց, վորոնք գասակարգերի բաժանված հասարակութեան ջատագով են, թե նրա՞նց, վորոնք դավանում են ընկերական աշխատակցութեան վրա հիմնված հասարակարգ: Յեթև նկատի ունենանք այս փոքրիկ մանրամասնութիւնը, վոր վերաբերում է ստրուկներին, այն ժամանակ Մորին պետք է կանգնեցնենք առաջին շարքի մարդկանց կողքին, իսկ յեթև ուշադրութեան ստնենք նրա ամբողջ քարոզը, նրան տեղ պետք է տանք յերկրորդ շարքում: Սակայն վո՞ր բանակի մարդ է մեծ ուտոպիստը:

Անշուշտ սոցիալիստների, վորովհետեւ ամբողջ

ուտոպիան» ջատագովութեան է այն կարգերի, վոր չկա շահագործումն, չկան գասակարգեր, վորտեղ չկա Ֆիդիբական աշխատանքները կատարում են քարոզիչ ֆիդիբական աշխատանքները կառարում են քաղաքացիները: Յեթև Մորը կողմնակից լինելը ստրուկան գոյութեան, ապա շատ հասկանալի չէ, վոր բոլոր ֆիդիբական աշխատանքները կձգելը ստրուկներին և վոչ թե միայն մի չնչին մասը—զգվելի աշխատանքները: Այժմյան սոցիալիստները չեն ընդունում ստրուկների մասին, վորովհետև հանրի ասածն ստրուկներին մասին, վորովհետև հանրի ասածն է, թե զիտութեանները, տեխնիկան ու քիմիոգիված են, թե զիտութեանները, տեխնիկան ու քիմիոն, այնքան զարգացած կլինեն սոցիալիստական հասարակութեան մեջ, վոր ամենակեղտոտ աշխատանքներն ինչպէս մաքուր կդարձնեն, և ուրեմն վոչ վոչ իրավունք ունենալ խորութեան զնելու աշխատանքների մեջ: Մորի ժամանակվա կուլտուրան զես ևս հիմքեր չէր առնել այսպիսի լուսաստեղծութեան համար, ուստի և «Ուտոպիայի» հեղինակն ակամայից, հակառակ յուր ամբողջ հեղինակութեան վոգուն, զզվելի աշխատանքները հատկացնում է ստրուկներին: Մորը սխալվում է, երբ սոցիալիստական հասարակութեան մեջ մտցնում է նրա համար խորթ տարր, բայց և այնպես մենք հետորա համար խորթ տարր, բայց և այնպես մենք հետորա համար նկատի ունենալով «Ուտոպիայի» ամբողջութեանը՝ հեղինակին դատում ենք ամենահայտնի սոցիալիստների կարգում:

Յերկրորդ որինակ: Յույն նշանավոր կատակերգու Արիստոֆանի յերկերից մեկում, «Կանանց աղբային ժողովի» մեջ հերոսուհին յուր սոցիալական դավանանքն արտահայտում է հետեւյալ խոսքերով:

«Ամենից առաջ յես ընդհանուր կղարձնեմ հողը փողն ու ամեն տեսակ կայքերը: ... Աղքատություն վո՞չ վոքի չի հարկադրել աշխատելու. չե՞ փոր ամեն ինչ կղառնա ընդհանուրի սեփականություն»*)

Արդ ի՞նչ անվանենք այս հերոսուհուն. ընդհանուր, թե մասնավոր սեփականության ջատագով կոմմունիստ, թե ինդիվիդուալիստ: Յեթե հաջի առնենք այն խոսքերը, թե ամեն ինչ կղառնա ընդհանուրի սեփականություն, այն ժամանակ նրան պետք է անվանենք կոմմունիստ, իսկ յեթե նկատի ունենանք վոր նրա դավանած կարգերում գոյություն ունի փող, ուրեմն և փոխանակություն, ուրեմն և անջատ արժուսություններ, ապա հերոսուհուն պետք է ինդիվիդուալիստ կոչենք: Ո՞ւմ կողմն է ձգտում այս կնո՞սիկը, յեթե չասենք՝ լեզուն:

Անշուշտ կոմմունիստների, վորովհետև հերոսուհին ամեն ինչ, նույն իսկ փողն, ընդհանուր է հայտարարում. բայց չիմանալով, թե փողն անհրաժեշտ է միայն ապրանքային արտադրության ժամանակ, տեղ է տալիս նրան կոմմունիստական հասարակության մեջ, վորտեղ փոխանակության, ուրեմն և փողի կարիք չէ կա: Յույն կինը սխալվում է, բայց չէ դառնում ինդիվիդուալիստ: Նրա ձգտումը պարզ է, իսկ դիտությունը՝ քիչ, ուստի և նա չէ կարողանում յուր աշխարհայացքն սղատել ինդիվիդուալիստական տարրերից:

«Ուտոպիստ» հեղինակի ու Արիստոֆանի հերոսուհու նման Նալբանդյանն էլ յուր դավանած կարգի-

*) Р. Пельманъ. 16ր. 296:

րում տեղ է տալիս չգուգորդվող, խորթ տարրի, բայց այս տարրը չէ փոխում նրա աշխարհայացքի ամբողջության դասակարգային բնույթը: Հայ հրապարակախոսի քարոզած ազգային արդյունաբերությունը շատ հետո յե կապիտալիստական արդյունաբերությունից:

XIV

Նալբանդյանը չէ բավականանում միայն նրանով, վոր ժողովուրդը կարողանա յուր սրտական ապրուստը հայթհայթել, այլ ցանկանում է, վոր այս յերկրագործ մաստան շատ ավելի արտադրե, քան կարող է սպասել: Նրա իրձն այն է, վոր դյուրացիությունը հարստանա վաճառելով յուր աշխատանքի հավելյալ արդյունքը:

«Հայոց հասարակ ժողովուրդը,—գանգատվում է հեղինակը,—աղքատ է և չունենալով վոչինչ նյութական կարողություն՝ հաղիվ հաղ սերմանում է և հրձում այնքան, վորքանը նրա ապրուստը, գիարզ և իցե, պիտի կարողանա ապահովել: Նա չէ կարող ավելի ցաննել, վորովհետև ույժ չունի: Ապա յեթե հայ շինականի ձեռքը մի փոքր դրամ անցնե, յեթե նա հույս ունենա, վոր յուր աշխատանքը պիտի գնահատվի, յեթե նա տեսնե յուր մշակության պտուղը, վո՞չ ապաքեն կրկնապատիկ կսկսի ցաննել, կրկնապատիկ հնձե՞լ»*)

Հայ հրապարակախոսը կամենում է, վոր դյուրացին արտադրե շուկայի համար: Այս տեսակետից իսախառուր Արավյանն ու Միքայել Նալբանդյանը կատարյալ հակոտնյաներ են: Մինչդեռ Աբովյանը ջատագով է անային փակ անտեսության, վորն արդյունքներն ար-

*) Մ. Նալբանդյանի յերկերը, Բ. 16ր. 348:

«Բայց խնդիրն այստեղ է, —ասում է հեղինակը,— թե՛ ս'վ տա յերկրագործին այն դրամը, վոր հարկավոր է նրան լքյալ բաղուկները գորացնելու համար»։*)

Ո՞վ պետք է յերկրագործի չորացած արտը ցոյլ մետաղյա անձրեկով։

«Վաճառականը, —պատասխանում է հայ հրատարակատուրը,—կամ փոքր ի շատե կարողության տեր մարդը։ . . Վաճառականը կարող է ամենայն վստահութամբ հում նյութեր առնուլ հայ յերկրագործից, աբրանք ստանալ փոխարեն։ . . Այս ճանապարհով միայն սողը կարող է բարվոքել յուր տնտեսական վիճակը, այս ճանապարհով նյութական ուժը կանցնե ազգի ձեռքը, սողը կգորանա և յերկրագործը և վաճառատանը և կարողության տեր մարդը որստորե կհարստանան։**)

«Յերկրագործության» հեղինակն այս խնդրում էլ ունի կարապետներ։ Անտիկ աշխարհի, Արեմոյան Յեվրոպայի ու Ռուսաստանի հասարակական մտքի զարգացման պատմությունից հայտնի յե, վոր ժողովրդական մասսաների տնտեսությունը բարվոքելու համար շատերը հույները դրած են յեղել պետության վրա։ Շատերից հիշենք Արիստոտելին Հունաստանում, Լուի Բյանին Ֆրանսիայում, Լատտալին Գերմանիայում ու Չերնիշևիսկուն Ռուսաստանում։ Ըստ Արիստոտելի՝ պետությունը յուր ավելորդ դումարներից պետք է ռժանդակություն տա չքավորներին, վորպես զի սրանք կարողանան պարապել մանր առուստորով և կամ հող

*) Նույնը, յեր. 348:

***) Նույնը, յեր. 349:

ձեռք բերեն մշակելու համար։ Լուի Բյանն ու Լատտալի պահանջում են, վոր պետությունը անհրաժեշտ դրամական միջոցներ շնորհե բանվորներին արտադրական միություններ հաստատելու համար։ Յեվ վերջապես Չերնիշևիսկին դյուզական համայնքը (община) պահպանելու խնդրում ու քաղաքական այլ հարցերում ժողովրդի համար նպաստավոր գործադրություններ երակնկարում միապետական կառավարությունից։ Այժմ յայսպիսի եույսերն ուսույիստական են համարվում. Ժերովհեսե իբրևի ճշմարտություն է ընդունվում այն խոսքը, թե պետությունը տիրոջ դասակարգի գործերը կառավարող մի կամիտե յե, և ուրեմն նրանից նույն դասակարգի շահերին վնասող գործադրություններ սպասել չե կարելի։

Հայ երապարակախոսը յուր մտածողությամբ մասն է վերսկիշյալ հեղինակներին ու հասարակական գործիչներին։ Յեթև նա յուր հույսը չե դնում պետության վրա և չեք էլ կարող դնել, վորովհետև հայ պետությունը յայսպիսի շուրեր, բայց ժողովրդի համար սպասկարող գործադրություններ սպասում է մի այնպիսի դասակարգից, վորը տնտեսական գործունեության մեջ չե ղեկավարվում և չե էլ կարող ղեկավարվել ժողովրդի շահերով։ Վաճառական ու արդյունաբերող դասակարգը ծառայում է յուր շահերին, իսկ Նալբանդյանը երապարակախոսը է սպասավորել յերկրագործությանը։

Գյուղացու, միայն դյուզացու արտադրած արդյունքներն անխփփոխ կամ մշակելով հեռավոր շուկաները, հասցնել և շինականի լքյալ բաղուկները գորաց

ներու համար նախապես փող դնել նրա տփի մեջ, — ահա այն պահանջները, վոր տնում է հայ հրապարակախոսը վաճառականներին :

Նալրանդյանի դավանած կարգերում դասակարգելի դիրքներն արժատական փոփոխութեան են յենթարկվում. առաջինները լինում են վերջին, իսկ վերջիններն առաջին. ստորին դասակարգը — գյուղացիութեանը դառնում է բարձր դասակարգ, իսկ բարձր — առևտրական ու արդյունաբերող — դասակարգը դառնում է ստորին դասակարգ: Հայ հրապարակախոսն իսահակի նրման իրավունքը ապրիս է կրտսեր Հակոբին, իսկ ամբողջ եռամսիս պատվիրում է ծառայել յեղորր:

XV

Այժմ ընթերցողք ուչադրութեանը հրապարակում ենք մի ուրիշ ու վերջին կետի վրա. վոր նույնպես կուտական է մնացել մինչև այժմ; վարավիտևս, ինչպես յերևում է. հայ հրապարակախոսի յերկերն ուսումնասիրողներն իրենց առաջ ընկած հազվագյուտ գոհարը դատարկ գարեհատի տեղ են ընդունել: Այս կետը թեև նոր փաստ չէ ավելացնում Նալրանդյանի վարդապետութեան գասակարգային վողին վորոչև յու համար, բայց նրա աշխարհայացքին մի շտիպանց ուչադրով յերանդավորումն է ապրիս: Սոսքն այն մասին է, թե ինչն է հարստութեան կազմում, և վորպիսի հանդամանքներում մի ժողովուրդ կարող է (հանդիսանալ) *հարստուր*

«Ուր չկա դուրս արտադրող գորութեան, — գրում է հեղինակը, — վոր յուր կարգով գեպի ներս պիտի գրավեր դուրսի հարստութեանը, այստեղ մի բնկերութեան անդամ ուրիշ կերպ չէ կարող հարստանալ, յեթև

փոչ նույն բնկերութեան մյուս անդամների հաշվով: Յեւ այդ հարստութեան չէ, այլ պատահական հակումն հարստութեան կողմ յերբմն դեպի այս և յերբմն դեպի այն կողմը: Այսոր դու յես հարուստ, վաղը յես կլինեմ և այն ժամանակ քո հարստութեանը անպատահաւ պիտի նվաղե՞ս:»^{*)}

Այս հատվածից յերևում է, վոր Նալրանդյանի աչքում աշխատանքի նպատակահարմար դործադրութեանն ինքն ըստ ինքյան արժեք չունի, վորովհետև չէ մեծացնում ժողովրդի հարստութեանը: Վորքան էլ զարդացած լինեն յերկրագործութեանն, արհեստներն ու կամ արդյունաբերութեանն, այնուամենայնիվ արանք մի ազդ հարստացնել չեն կարող, յեթև նրանց արդյունքները չեն արտահանվում արտասահման, և փոխարենը փող չէ ներմուծվում: Ներքին չուկան, ներքին փոխանակութեանը նշանակութեան չունեն, վորովհետև այս գեպում նոր դրամ չէ մտնում հասարակութեան մեջ և մեկը հարստանալ կարող է միմիայն ի հաշիվ հարեանի: Ժողովրդի հարստութեան անդրերն հարտաքին առևտուրն է, ավելի ճիշտ՝ արտաքին արտաքին առևտուրն է, վորովհետև արտահանած ապրանքի փոխարեն փող է ներս բերում հասարակութեան մեջ: Այսպիսի առևտուրով պարապելու համար անհրաժեշտ է արտահանելու արդյունքներ պատրաստող արտադրութեան: Արդյունքն, ապրանքն ինքն ըստ ինքյան հարստութեան չէ. իսկական հարստութեանը փողն է, վոսկին ու արծաթը: Արդյունքն, ապրանքը լոկ միջոցներ է ույժեր են, վորոնցով հնրավոր է

*) Նույնը, յեր. 379—380:

ճաշել ու ներս լերել զբոխ հարստությանը—իսպր, վոսկին կամ արծաթը: Հետեյալ սոսկերի մեջ հեղինակն ավելի և պարզում յուր միտքն սրինակով, վարկի խմանում ենք, վար նա հարստության սակայմ խոհասկանալիս և հասկանում:

«Ավելի հասկանալի չինելու համար ստարկան բացատրենք մեծը և ընդհանուրը փոքրի և մասնաւորի կերպարանքով: Գնենք թե քսան հոգի մեք սպրտած ենք մի անգամ և վաճառականության ենք անում մեր մեջ: Մենք ամենքս գործում ենք առանձին առանձին, յուրաքանչյուր մարդ յուր սրտի համար, և մեզինից յուրաքանչյուրը տարբեր կարողության ունի, մինը շատ, մյուսը փոքր և այլն, և մեր բոլորի ունեցած կարողությանը իրար վրա բարդելով գնենք թե ստանում ենք հազար վոսկու մի գրամադյուլս: Արդ հարցնում ենք, յերբ վար մեր բոլորի գործողությանը այն հազար վոսկու վրա յե, յերբ մեր ձեռքում չկա մի ույժ, վոր կարող լինել մեր քսանից դուրս յեղած արծաթը ներս լերել մեր մեջ, մեզինից մինը կարող և հարստանալ առանց քսանի շահին դիպչելու: Վո՞չ ապաքեն յեթե մեզինից մինը յուր ունեցածից ավելի մի հարյուր ստանա, մեզինից մյուս մինը պիտի տուժի այդ հարյուրը: Յեզ այս հարյուր վոսկին յերևութական և սոսկա մանակյա մի վաստակ և, քանզի ընդհանրությանը չունի հարստության, և շահփողը ընդհանուրի հաշվով շահվեցավ. քանզի նոր արծաթ չմտավ ընդհանրության մեջ, այլ մինից անցավ գեպի մյուսը, վոր վաղը կանցանե գարձյալ գեպի մի այլ մյուսը»:²⁹⁾

²⁹⁾ Նույնը, յեր. 380:

Նալրանդյանը մերժում և ներմուծող ստեղծողը, պախարակում և Յեվրոպայից բերած մանուֆակտուրային սպրանքներով վաճառականության անելը, վարովհետե «ձեռագործի (մանուֆակտուրայի. թ. Ա.) վաճառականությանը չի գարձում գեպի մեր սպրտը գրամի չըջանալությանը» (յեր. 350): Հայ հրապարակախոսն ստաջարկում և յերկրագործական արդյունքներ արտահանող վաճառականությանով գրադվել, վարովհետե այս գեպում «վաճառականը վոչ միայն կադատվի Յեվրոպացոց համար այն ու վախով և նուրբանարար կհանդիս յուր վտարի վրա, այլ և յեվրոպական արծաթը և վոսկին ներս կհոսեցնե սպրտ մեջ բայց նեղաբեր և վոսկին ներս կհոսեցնե սպրտ մեջ լծակը, շարժարանը: Ընդհանրությանը կապահովվի քանզի զորությանը կզբաղի յուր կողմը, քանզի Յեվրոպան կարտա և նորան, քանզի յերկրի բերքերը գուրդ տարով յուր մեջ պիտի գարձնե գրամի չըջանալությանը»:³⁰⁾

Մույն հասկաններն ստանց յերկրայությանը նույն անգամ թողնելու ապացուցում են քաղաքատնտեսության պատմությանը նույն իսկ հարեանցորդն ծանոթ վարդուն, վար «Յերկրագործության» հեղինակը կըրմանում և անտեսալիտական հայտնի ուսմունքի—մերկանախիլովի հիմունքները: Մեր այս խոսքերի ճշմարտությանն ակներև գարձնելու համար պետք է յերկրայությանն անենք մերկանախիլովի մտախն:

³⁰⁾ Նույնը, յեր. 357:

Տնտեսագիտական հիշյալ դպրոցը հատուկ նշանակություն էր տալիս արտաքին առևտուրի միջոցով փողի ներմուծմանը և անուշադրուքյան մատուցում ներքին առևտուրը, վորսվիետե այս իբրև թե չէր նպատում ազգի հարստանալուն: Սկզբում մերկանտիլիստները հակառակ էյին ներմուծող առևտուրին, վորսվիետե, ասում էյին, ներմուծած ապրանքի փոխարեն փող է դուրս գնում յերկրից: Բայց հետին շրջանի մերկանտիլիստներն արդեն կողմնակից էյին առևտրական գուգակչոին (բարանո), այսինքն բուլատում էյին նաև ներմուծող առևտուրը, բայց այն պայմանով, վոր արտահանուքյունն ավելի շատ լիներ, քան ներմուծումը: Այս գեպում ավելորդ արտահանածի փոխարեն գրանց ազգի մեջ փող կմտներ, այսինքն արդը կհարստանար: Ընդհակառակը յեթե ներմուծումն արտահանանումից շատ լիներ, ավելի ներմուծածի փոխարեն ազգը պետք է դուրս տար փող, ուրեմն կաղքատանար:

Գլխավորապես XVI ու XVII դարերում մերկանտիլիզմն ունեցավ բազմաթիվ ներկայացուցիչներ Անգլիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Սպանիայում, Իտալիայում ու նույնիսկ Ռուսիայում: Այս ուղղութիյան նշանավոր ներկայացուցիչներից մեկն է անգլիացի Թոմաս Մենը, վորի գրքերից մեկը անունը—«Անգլիայի գանձերն ստարերկրյա առևտուրի մեջ»—վորչում է մերկանտիլիզմի եռթյունը: 1664 թվին լույս տեսած այս գրքի մասին Ալգամ Մմիտը գրում էր.

«Այս աշխատության վերնագիրն—«Անգլիայի գանձերն ստարերկրյա առևտուրի մեջ»—գարձավ վոչ միայն Անգլիայի, այլ և մյուս բոլոր առևտրական յերկրից»

ներքի ժողովրդական անտեսության հիմնական սրենք: Ներքին կամ անային առևտուրը, վորի նույնպիսի կապիտալն յերկրին ավելի մեծ սղուտ է տալիս, համարվում էր ստարերկրյա առևտուրից ցած: Ըստ այս կարծիքի՝ ներքին առևտուրն յերկրի մեջ չէր ներս բերում փող և վոչ էլ դուրս հանում: Յեպ ուրեմն այս առևտուրը չէր կարող վոչ հարստացնել և վոչ էլ աղքատացնել:*)

Այժմ բերենք այս գլոբոսը գրականությանից մի քանի հատվածներ, վորոնք մերկանտիլիստական մըտքեր պարունակելով անմիջական յերեսն կհանեն այն մեծ նմանությունը, վոր կա սրանց ու Նալբանդյանի բարոզած զազախարների միջև:

«Ձի կարելի ժխտել,—գրում էր հայտնի վերանորոգիչ գոկոսր Մարտին Լութերը 1524 թվին լույս տեսած և վաճառականության ու վաշխատությանը նվիրված մի գրքում,—վոր առքն ու վաճառքն անհրաժեշտ գործողություններ են, առանց վորանց չի կարելի կառավարել: առանձնապես այս ճիշտ է այն ստարեկանների վերաբերմամբ, վորոնք ծառայում են անհրաժեշտ կարիքներին ու մեծարանքին բավարարություն տալու համար: չե՞ վոր նահապետները նույնպես վաճառում էյին ու գնում անասուն, բուրդ, հացահատիկ, յուղ, կաթ ու այլ բարիքներ: Սրանք Աստու պարզենքն են, վոր նա հանում է յերկրից ու բաժանում մարդկանց: Բայց արտասահմանյան առևտուրը, վոր ապրանքներ է ներմուծում կալկաթայից, ինչպես որինակ՝ մետաքս, վոսկեղեն իրեր ու համեմներ, վորոնք ծառայում են շաղկության ու վոչ թե սղախ համար»

*) В. СВЯТЛОВСКИЙ, іեր. 152:

և դարս եւ ծծում յերկրից ու մարդկանցից փող. — այս-
 պիսի սակաւորք բուլաւորելի չե... Ատովամ էրա-
 վանք և ավել, — ծագրում և Լուսիբը, — վար մենք զեր-
 մանացիներս մեր վստիկն ու արծաթը ամենք արիչ յեր-
 կիրներք, ամբոյ՞ աշխարհը հարստացիներք, իսկ ինք-
 ներս աղքատ մնանք: Անգլիան շատ ավելի քիչ վստիկ
 հունենար, յեթև մենք նրան թողնելինք յուր գործովամը-
 ները: Պարտուգալիայի արքան էլ քիչ վստիկն կու-
 նենար, յեթև նրան թողնելինք յուր համեմ-
 ները: Յեթև մարդ հաշիկ, թև զերմանական յերկիրնե-
 րից ասանց կարիքի ու պատճառի վարքան և փող ար-
 տահանվում միայն Յրանիֆուրայի չափան, ապա կը-
 պարմանա, թև ինչպես և նույնիսկ մի գրուչ մնում զեր-
 մանական յերկիրներում»:*)

«Վստիկը պակասութեան ընդհանուր ու հետափոք
 պատճառն այն է, — ասում և Մարտին Լուսիբերից մաս-
 մի զար հետս, 1622 թվին անգլիացի Միտտելենն
 «Անգլիայի ազատ ստեփաւորը» գրքում, — վար մեկէ
 չափազանց շատ եւ՛ք գործածում ստարերկրյա աղ-
 քանքներ, վարոնք փոխանակ մեզ հետար ոգտակալ
 լինելու՝ վնասակար եւ հանդիսանում, վարուկետս զըր-
 կում եւ մեզ այնքան փողից, վար կարող եր ներսուծվե-
 այս դատարկ բաների փոխարեն: Մենք շատ մեծ քան-
 կուլթյամբ ապտում ենք Սպանիայի, Յրանիայի,
 Մերձհնդկաստան չրջանի ու արեփեյան յերկիրներէ զը-
 նի, Սպանիայի չամիչ, Արեփեյի կորինթյան քի՛՛մի,
 Իեննեկաուր նուրք ու կոպիտ կապիներ, Բապիլոնի մե-
 լիքն ու զարմար զարմար զարմար զարմար»:

*) К. Маркс. «Критику политической экономии»
 пер. П. П. Румянцева, СПб. 1907. չեր. 123

աւարտյա գործովամըներ, Արեմոյան Հնդկաստանի հա-
 մեմներ. — այս բոլորը մեզ համար անհրաժեշտ կարիք
 չե, բայց մենք զնում ենք այս բոլորը կոնսիլի փո-
 դով»:*)

«Հայանի յե, — գրում եր Ռուսաստանի նշանավոր
 մերկանտիլիստ բարոն Լյուբերտան, այն Լյուբերտար,
 վարից ազգվելով Պետրոս Մեծը գործնականացես պատ-
 վաստում եր մերկանտիլիցմը Ռուսաց աշխարհում, —
 վար մի քանի յերկիրներում քեւ մեծ առեփուրք եւ
 տնում, բայց հպատակները քիչ եւ ոգովում նրանից:
 Այս պատահում և այն ժամանակ, յերբ բնակիչներն ի-
 րենց արդյուքները հում են վաճառում. այս զեպում
 արիչ յերկիրներէ հպատակները մշակում են և ստա-
 նում մեծ սգուա, մինչդեռ այս արդյուքներէ տերերը
 չարքաչ կյանք են վարում: Կամ այս պատահում է այն
 չարքաչ կյանք են վարում: Կամ այս պատահում է այն
 ժամանակ, յերբ մի յերկրում ռաւար ապրանք ավելի
 յեն սպառում, քան կարող եւ փոխարենը հատուցանել
 տեղական արդյուքներ արտահանելով: այս զեպում
 բալանը պետք է վնարել փողով, և յերկիրն անհրաժեշ-
 տորեն կոխեւ հետզհետե ավելի ու ավելի ազգասու-
 նայ»:**)

Կարծում ենք, վար Գերմանիայի, Անգլիայի ու
 Ռուսաստանի հիշյալ յերեք հեղինակներէ—Մարտին
 Լուսիբի, Միտտելենի ու բարոն Լյուբերտանի մերկան-
 տիլիստական հտովամներն, այլ և Ազամ Մահի վի-
 յությանը գուզազրելով հայ հրատարակախոսի ստան-

*) Նույնը, յեր. 122:
 **) В. Святловский, չեր. 161:

ներքի հետ կարելի չէ հանգչել միայն մի յեզրակացութեան, այն է, վոր ՆԱԼԲԱՆԳԻՅԱՆԸ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԱՐԸՍՏՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ՀԱՅԱՑՔՆԵՐՈՎ ՄԻ ԱՆԿԱՎԱԾԵԼԻ ՄԵՐԿԱՆՏԻԼԻՍ Ե:

XVI

Առաջին հարցից կարող է թվալ, վոր հայ հրապարակախոսի մերկանտիլիստ լինելն այնքան էլ ուշագրութեան արժանի իրողութեան չէ: Մերկանտիլիստներ շատ են յեղել, — կրացական չեն անտարբերութեամբ, — նալրանդեանն էլ նրանցից մեկը: Բայց խնդիրն էլ հենց այս է, վոր հայ մերկանտիլիզմը տնտեսագիտական հիշյալ պարոցի մի նոր, մինչև այժմ անհայտ նյութավարութեանը լինելով այս ուղղութեան պատմութեանը հարստացնում է վոչ միայն քանակապես, այլ և վարակապես:

Նախ քան ասածներս սպասուցանելը հարկավոր է մի փոքրիկ նախադատարասութեան: Բնապատմական ճշմարտութեան է, վոր յուրաքանչյուր աշխարհագրական գոտի ունի յուր հատուկ բուսականութեանը. նույնպիսի մի ճշմարտութեան է նաև այն, վոր յերբեմն միևնույն բույսը կարող է աճել յերկու գոտում էլ: Ըստ յերեվոյթին այս հակասութեան է, բայց այս հակասութեանը լուծվում է հեշտութեամբ, յերբ նկատի յենք ունենում, վոր մի բույս ուրիշ գոտի փոխադրվելով զգալի փոփոխութեանները յե յենթարկվում: Բույսի մի գոտուց մյուս գոտին անցնելը վոչ միայն չէ հակասում բնապատմական հիմնական ճշմարտութեանը, թե յուրաքանչյուր գոտի ունի յուր հատուկ բուսակա-

նութեանն, այլ, ընդհակառակն, անհերքելի կերպով հաստատում է նույն թեղիսը, վորովհետև բույսի բոլոր մասերի փոփոխութեանը՝ լինելով հետեվանք նոր միջավայրի՝ անփխտելի վկայութեան է նոր գոտու աղբյուրութեան, աղբեցութեան, վոր ձգտում է գոտուն համապատասխան բուսականութեան ստեղծել:

Ճիշտ նույնպիսի յերեվոյթական հակասութեանն է իրական հաշտութեան գոյութեան ունի նաև իդեոլոգիական աշխարհում: Իդեոլոգիաների պատմութեանից հայտնի չէ, վոր յերբեմն միևնույն ուղղութեանը տարբեր ժամանակներում հանդես է գալիս իր թեթիվ գանազան գասակարգերի իդեոլոգիա: այն ուսմունքը, վոր այսօր վոդեվորում է շահագործողին: վաղն զմայլեցնում է նրա զոհին: Այս խոսքերն ըստ յերեվոյթին հակասում են այն աշխարհայացքին, ըստ վորի յուրաքանչյուր գասակարգ ունի հատուկ հոգևրանութեան, իդեոլոգիա, վորը խստիվ տարբերվում է հասարակական մյուս խմբերի իդեոլոգիաներից: Բայց իրոք այստեղ վոչ մի հակասութեան չկա. ճիշտ է այն, վոր յուրաքանչյուր գասակարգ ունի հատուկ իդեոլոգիա, սակայն ճիշտ է նաև այն, վոր իդեոլոգիան կարող է անցնել գասակարգի գասակարգ: Թվացող հակասութեանը վերանում է բոլորովին, յերբ հիշում ենք, վոր ամեն իդեոլոգիա գասակարգից գասակարգ անցնելով մեծ փոփոխութեանների յե յենթարկվում, ստանում է նոր կերպարանք այնպես, ինչպես արեղակի լույսն յերանդավոր ապակիների միջից անցնելով գուհազան գույներ է ստանում:

Յուրաքանչյուր համար, վոր, հիրավի, իդեոլոգիա

ներն անցնում են գասակարգից գասակարգ և այս գեղ-
ջում մեծ փոփոխութիւններ կրում, սոցիալոգիական
նոր բովանդակութեան ստանում, — բովանդակ և մաս-
նանիշ լինել միայն քրիստոնեութեան վերա: Ահա մի
ուսմունք, վոր ստաջ գամանում է յայն ձկնորսներն ու
ճուրացիկ շքախոններն, իսկ այժմ՝ նրանք, իրոնց մի
ճատի վրա ավելի հարստութեան կա, քան ամբողջ
Յերուսաղեմի համայնքում: Ահա մի ուսմունք, վոր
ստաջ բուն էր զբել միջին կատակորսներում ու խոր-
խուլ խրճիթներում, իսկ այժմ բազմում է Վատիկանի
սպարանքում ու յերկրակալների պալատներում: Ահա
մի վարդապետութեան, վորի հետեւողները հնում չա-
բին չէին հակառակում, իսկ այժմ վոգելորում են
աշխարհակուլ միլիտարիզմով: Յեւ վերջապես ահա մի
կրոն, վոր յերբմն ունեւորներին զժոխք էր արտօրում
և քարոզում էր չաղիկը մայր բնկերան, իսկ հիմա
գաշնակցելով աշխարհիս հզորների հետ՝ բնական ու
արդար և հարստարում այն կարգերը, վորտեղ ան-
թիվ բյուրավորների տանջում, զոհում ու մաշկում են
իրեն անբան սպանողների: Այնտարանք գամանել են
և՛ տերն ու սարուկը, և՛ ազնվականն ու ճորսը, և՛ վար-
դեան ու աշկերտը, և՛ արդյունարեւոյն ու բանվորը,
իսկ փո՛րքան տարրեր և սրանց յուրացրածն Ավետա-
բանից: Մի տեղ այս մասնավոր սեփականութեանը
հովանավորող մատչան և, մի ուրիշ տեղ՝ բնահանուր
հեղանակութեանը ջատագովող գիրք: այնտեղ սրանով
բանութեանն են արդարացնում, այստեղ ազատու-
թեանը փատարանում: մերթ այս ուղեկից և աշխարհա-
կանի սրնածոր սրին, ինկիկելտորի բացատրտ խո-

բույզիկն ու դահճի բարձրագիւր կատակարանին, իսկ
հաճախ էլ հանդուս է հալածյալի, վաստակյալի ու
բեռնավորի համատացող, հուսացող ու սիրող կրծքի
գրա...

Քրիստոնեութեանը միակ սրինակը չէ իղեւոր-
գիւնների պատմութեան մեջ: կրոնական, ինկիկաւա-
յական, զբական և այլն շատ ուղղութեաններ կան
վորոնք տարախոսիկ անցյալ են ունեցել: Այսպիսի-
ներէց և նաև մերկանտիլիզմը, վոր միշտ ու ամենու-
րեք միևնույն կերպարանիով չէ յերեվացել: Այսպե-
սիք սրինակ՝ հիշյալ ուղղութեանն այլ բնավորութեան է
ունեցել Արեւմտեան Յեկրայայում և բոլորովին այլ
իւրաքանչեւ:

Արեւմտեան Յեկրայայում մերկանտիլիզմը հան-
գես յեկալ այն ժամանակ, յերբ նոր գանված ցա-
մաքներն ու նոր ճանապարհները յեկրայական սպ-
րանքների համար ընդարձակ չուկա էին բաց արել
Արդյունքներն սպրանք գարձել էին, լայն բանվո-
րական ույժը՝ գետեւ վոչ: Իշխում էր յերկրադարձա-
կան ու յժը՝ գետեւ վոչ: Իշխում էր յերկրադարձա-
կան ու արհեստավորական արտադրութեանը: կապի-
կան ու արհեստավորական արտադրութեանը գետ ևս չկար
տալիստական արդյունարեւոյնութեան գետ ևս չկար
բուրժուազիան ուղուս քաղում էր վոչ թե արտադրու-
թեանից, վոչ թե բանվորի ույժը զորձադրելով ու-
հալելյալ աշխատանք խելով, այլ փոխանակութեան
հալելից, սրբիչների արտադրած արդյունքները վաճառե-
լով: Ահա այս զրութեան պատկերացումը մարդկանց
գիտակցութեան մեջ, վաճառական դասի պրակտիկան
թեորեայի մեջ հանդես էր գալիս մերկանտիլիզմի
կրպարանքով: Մերկանտիլիզմն Արեւմտեան Յեկրա-

ամենահզօրը գյուղացիութեանն է: Նրա կարծիքով իբրև ինքնազգի զբուխն կարող է ստեղծվել այն ժամանակ, յերբ հոգի մամուլաբ սեփականութեանը վերացած լինի և հոգին ևլ համայնացրած: Նախնորդանք բարոյում և արտազբուխն վաղ թե սեփական սպասման համար, այլ շուկայի բնական անտեսութեան փոխարեն ջատագոյնում և սպասնքային ու փողային արնանութեանը, միայն այնպիսի պայմաններում, զոր այս անտեսութեանը շինանս գյուղացիութեան շահերին: Այս պայմաններն յերև. ք են. 1. վաճառական ու արքյունարերող դասակարգը պետք է կարգն փոքրամասնութեան: 2. այս դասակարգը նախապես գրամական սփանդակութեան տա գյուղացիներին, փոքրեզգի սրանք կարողանան կրկնապատիկ ցանկ ու հնձել և 3. արքյունարերող ու վաճառական դասակարգը մշակել ու վաճառել միայն շինականի արտադրած արգյունքները: Ներմուծող առևտուրի փոխարեն, փորը հայ հրապարակախոսն անվանում է յեվրոպացոց համար ծառայութեան ու միջնորդութեան, և փորը յերբմն կարող է սպասկար լինել վաճառականին, բայց փոչ ընդհանրութեանը, — նա առաջարկում է սպասյին վաճառականութեան, այսինքն գյուղացու արգյունքների արտահանութեանով գրագլուղ առևտուր: Միայն այսպիսի առևտուրը գրամի շրջանառութեանը կմտցնել սպգի մեծամասնութեան, յերկրագործ մասսայի մեջ. շինականի ձեռքը փող կանցնի, և նա կսկսել փոքր ինչ ազատ շունչ առնել: Ազգային վաճառականութեանը ոգուա կրերթ թե առուտուրով պարապողին և թե մանավանդ գյուղացիութեանը, փոր է հասարակութեան հիմքը, լծակը.

չարժարանը: «Յերկրագործութեան» հեղինակը ճշգրտում է ստեղծելու հարուստ, բայց աշխատավոր գյուղացիութեան և միմիայն այս դասակարգի շահերի տեսակետից և քարոզում մերկանտիլիզմ:

Կարծում ենք, Վոր մինչև ժամանակն սեղնութեաններն իրավունքն են տալիս մեզ հետևելու յեղրակացութեան հանդեպ. միևնչեռ Արեվմտյան Յեվրոպայում մերկանտիլիզմն ապարեզ է յեկել իբրև առևտրական բուրժուազիայի իդեոլոգիա, միևնչեռ փուստտանում նույն ուղղութեանն հանդես է յեկել իբրև կալվածատեր սպանվականութեան իդեոլոգիա, մեզանում, ընդհակառակը, մերկանտիլիզմը փառաբանվել է իբրև գյուղացիութեան բարորութեանը նպաստելու մի միջոց. նրանով վոգեվորվել է հայ գյուղացիութեան բերրեանիլը:

ՀԱՅ ՄԵՐԿԱՆՏԻԼԻԶՄԸ ԳՅՈՒՂԱՅԻՈՒԹՅԱՆ ԻՎԻԵՈՂՈՒԹՅԱՆ Ե:

Այս հետաքրքրական հայտնութեան է վոչ միայն հայոց գրականութեանն ուսումնասիրողի կամար, այլ և ուշագրավ նորույք նույն իսկ տնտեսագիտութեան պատմութեան հանդիսարանում:

Ավարտելով այս պատճառանգրական ախարկը՝ մեզ մտում է ավելացնել, Վոր Նախանդյանի «Յերկրագործութեան» վերլուծութեանը իսխտում է ի միջի այլոց նաև հիմունքն այն հայացքի, ըստ վորի 50—70 քվականների ռուսահայ գրականութեանը միայն բուրժուազիայի իդեոլոգիա յե ներկայացնում: Սույն հա-

յացքը պաշտպանողներին ի հերքումն կարող ենք մատնանշել հայ հրապարակախոսին, վսր դեպի համայնացրած հողն ու մանր յերկրագործությունն եր կոչում ստրուկ, աղքատ ու պանդուխտ աղղակիցներին:

Աշխարհիս հզորների ջատագովը չէր Սիմեոն Մանիկյանն, այլ զրկվածների ու տառապալների: Յուր կյանքով ու մահով այս նոր Գրակքոսը հաստատեց, թե իրավունք ունեւր յուր մասին գրելու այն տողերը, վորոնք տպված են «Յերկու տողի» մեջ:

«Մենք ազատակամ նվիրեցինք մեզ հասարակ ժողովրդի իրավունքը պաշտպանելու: Մեր անձը և գրիչը չնվիրեցինք հարուստներին. նոքա յուրյանց արծաթի թումբերի տակ միշտ անխոցելի յեն նաև բռնակալների իշխանության մեջ: Բայց այն խեղճ հայը, այն հարըտահարված, վողորմելի, աղքատ, մերկ և քաղցած հայը, վոչ միայն ճնշված ոտարներից և բարբարոսներից, այլ և յուր հարուստներից, յուր հոգեվորներից... ասա այն հայը ամենայն արդարացի իրավունքով գրավում է մեր ուշադրությունը, և նորան դարձյալ առանց և վայրկենական յերկմտության նվիրեցինք մեր բոլոր կարողությունը: Պաշտպանել այն հայի առաթուր կալված իրավունքը՝ է մեր կյանքի բուն խորհուրդը և նպատակը: Յեվ այս նպատակին հասնելու համար չե պիտուր ներկրկենք վոչ բանտի և վոչ սքսորի սուջև, վոչ միայն բանիվ և գրչով, այլ և զենքով և սրյունով, յեթե մի որ արժանի լինինք զենք առնուլ մեր ձեռքը և մինչև այժմ քարոզած ազատությունը նվիրել և սրբել մեր արյունով»:

Ոտարներից ու բարբարոսներից, այլ և յուր հարուստներից ու հոգեվորներից հարստահարված, վողորմելի, աղքատ, մերկ ու քաղցած հայը յերբեք չի մոռանա կամ իշխնի նահատակին, վորը թեև վաղ մեռավ, բայց յերկար ապրելու յե նրանց սրտում, վորոնք յերկրպագու յեն ժողովրդի բարորության վսեմ իրեւրին:

1912 թ. հունվար—փետրվար.

Կալոս ավամ:

ԹՎԳ. ԱՎԴԱԼԲԵԳՅԱՆԻ

ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ (ԳՐԱԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ)

ԱՇԽԱՏՈՒՅՑՈՒՆՆԵՐԸ

I. ԱՌԱՆՁԻՆ ԳՐԳՈՒՅԿՆԵՐՈՎ.

1. Խաչատուր Աբովյան.—*Գրական-պատմական վերլուծություն, Վաղարշապատ*, 1910.
2. Հոգի վիշտը Մուրացանի յերկերում.—*Գրական-պատմական վերլուծություն, Վաղարշապատ*, 1911.
3. Միֆայել Նալբանդյան.—*Գրական - պատմական վերլուծություն, Ա. տպագրություն, Վաղարշապատ*, 1913. Բ. տպագրություն, *Յերեվան*, 1928.
4. Հայ գյուղը Հովհաննես Թումանյանի յերկերում.—*Գրական-պատմական ակնարկ, Յերևան*, 1924.
5. Կարլ Մարքսի տնտեսական զարգացման քեդրիան.—*Ա. տպագրություն, Յերևան*, 1925. Բ. տպագրություն, *Յերևան*, 1926.
6. Անհայտ աղանդավորներ հայոց մեջ XVI ու XVII դարերում.—*Հավելված Գրասերի որսագրից, Վիեննա*, 1926.
7. Հաս, սակ ու բաժ.—*Հայաստանի տնտեսական զարգացման պատմության խնդիրների շուրջը, Յերևան*, 1926.

8. Արսեն Թոխմախյան.—*Գրական-պատմական ակնարկ. հավելված՝ Առաջին զաղափարական ավազակը հայոց մեջ—Մերկե-Կուլարի Տեր Մղրախ 1791—1792 թ. թ., Յերևան*, 1926.
8. Մի գաղտնիք հայ վիմական արձանագրությունների մեջ ու նրա նշանակությունը Հայաստանի տնտեսական զարգացման պատմության համար, *Յերևան*, 1927.
10. Նոր Բայազդի նորագյուտ սեպագիրն ու նրա հնագիտական միջավայրը, *Յերևան*, 1927.
11. Յերկու եջ Հայաստանի վառոզման պատմությունից ու նրանց գործնական հետևանքները, *Յերևան*, 1927.

II. ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐՈՒՄ

- ✓ 12. Միջավայրի քեդրիան («Գեղարվեստ» *հանդես, Թիֆլիս, Բ. տարի*, 1909, №3),
13. Շիրվանզադեյի վեպերի նյութը.— («Արարատ» *ամսագիր, Վաղարշապատ*, 1910, № № 4 ու 5),
- ✓ 14. Մերկանտիլիզմը հայոց մեջ.— («Հորիզոն» *որաթերթ, Թիֆլիս*, 1913, № № 268 ու 269),
- ✓ 15. Հանգույցի լուծումը.—*Մեքայեղ Նալբանդյանի աշխարհայացքի բնորոշման խնդրի շուրջը* («Հորիզոն» *որաթերթ, Թիֆլիս*, 1914, № № 6, 10, 15 ու 21),
16. Սիմեոն կաթուղիկոսի հիշատակարանի ծածկագիրը («Բանբեր Հայաստանի Գիտական Ինստիտուտի», *գիրք Ա-Բ, Վաղարշապատ*, 1921—1922),

17. Կարծեցյալ Շապուհը — «Պատմությունն Բազրատունույ» գրքի հեղինակը վր ինդրի շուրջը («Բանբեր Հայաստանի կան Ինստիտուտի», գիրք Ա-Բ, Վա պատ, 1921—1922),
18. Հայ ազատագրական շարժման յերկու հաս դարի վերջերում («Նորք» հանդես, վան, 1922, Ա. գիրք),
19. Բահրան ու մյուլքը **XVII—XVIII** դարե յերե ն («Նորք» հանդես, Յերևան, 1923, Բ. մատոս ուրվագիծ),
20. Յերկրագործական հավելյալ արդյունքի **XVII—XVIII** դարերում ու **XIX** դարի ս ու-հայերեն տնտեսագիտական տերմինաբանա կան բառարան :
21. Հայ անդրանիկ պարբերականն ու նրա խմբ («Վերելք» հանդես, Յերևան, 1924, Ս
22. Ֆրանսական մեծ հեղափոխությունն ու մանակակից հայերը («Նորք» հանդես վան, 1924, Գ. գիրք),
23. «Կոմմունիստական Մանիֆեստի» հայերեն մանուրքյունները 1887-ից մինչեվ 1 («Վերելք» հանդես, Յերևան, 1924, Ս
24. Հայաստանում բամբակագործությունը կանգնելու և ընդլայնելու հնգամյա 1924—1929 թ. թ. («Վերելք» հանդ րևան, 1924, № 4-5),
25. Միերը հայոց մեջ.—Նյութեր Հայ կրոնի մության համար («Հանդես Ամսորյա» նա, 1927 թ. № 8-ից սկսած) :

ՍՏ ԵՆ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԼՈՒՅՍ ԿՏԵՄՆԵՆ
 շինականի ու գեղջկուհու աշխատավարձը
 հիկեդերտրդ դարում (գեկուցված և Հայաստանի
 նի Գիտության և Արվեստի Ինստիտուտի
 պատմական-հասարակագիտական բաժնում
 1927 թ. հոկտեմբերի 15-ին),
 մատ.—Հայաստանի տնտեսական զարգացման
 պատմության խնդիրներից,
 յերե ն գրավոր նումերացիայի զարգացման հա-
 մատոս ուրվագիծ,
 յերե ն գները **XV—XVIII** դարերում ու
 սու-հայերեն տնտեսագիտական տերմինաբանա-
 կան բառարան :



110



«Ազգային գրադարան»



NL0382734

70.153

ԳԻՆԸ 1 ՌՈՒԲԼԻ